

ՀԱՅ ԳՐԹԻ ՑՈՒՑԱՀԱՆՂԷՍ

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻ ԹԵՐՐԱՆ

Մշակութային և Հասարակական
Երկշաբաթաթերթ

Ջոյն

1800 րոման
Հայաստանում 320 դրամ



Յոյս

Երկշաբաթաթերթ

6-րդ տարի, քիւ.133, Հոկտեմբեր 24, 2012,
1800 քուման
Հայաստանում 320 դրամ

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 2 **Համայնք**
- 3 **Նոր Զուղայի երիտասարդների պահանջը**
Նիկիտ Միրզայեանս
- 4 **Ոչ օպամա, ոչ Ռամնի**
- 6 **Հայաստան. Հիւսիս-հարաւ ատոմայրուղու կառուցման աշխատանքները սկսել են Անուշ Մկրտչեան**
- 12 **ՊԺ-ի պատգամաւորները պատասխանում են «Յոյս»-ի հարցերին**
- 12 **Ռուբիկ Սարգսեան. Առաջնահերթը միմեանց հանդուրժելն է**
- 14 **Էմիլ Մնացականեան. գաղափարական տարանջատում չկայ**
- 15 **Ժողէֆ Մեհրաբեան. խմբակցութիւն թե՛ մարզամշակութային միութիւն**
- 16 **Ալբերտ Քոչարեան. Ոչ բոլոր հարցերն են քւեարկութեամբ լուծուում**
- 18 **Չրոյց Լեւոն Հաֆթանի հետ Ռոբերտ Սաֆարեան**
- 20 **Հայ գրքի ցուցահանդէս Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում**
- 22 **Խոհանոց**
- 23 **Տնտեսուհու անկիւն**
- 24 **Քաթրին Եաղուբեան Մարզանք**



Մտացած ներգաղթ

- 8 **Ռուս-իրանական կռիւները եւ հայերը**
Ռ.Ս.
- 8 **Հատուած «Պարսկաստանի հայերը» գրքից**
Նազար Յ. Գորոյեանց
- 10 **Գրքի հեղինակի մասին**

Պարսկերէն բաժին

- | | | | |
|--|---|--|----------------------|
| 2 Այս համարի հայերէն էջերում | | 10 Չրոյց զգեստների դիզայնը Շաղիկ Էդւարդարեանի հետ | |
| 4 Նախկին կես-հայկական քաղաքը | 8 | 12 Պատմաժողով | |
| 5 Ռոբերթ Սաֆարեան Հայաստանի մօտեցումը Իրան- | | | 12 Պատմաժողով |
| | | | Քաթրին Եաղուբեան |

Յոյս Հասարակական-մշակութային երկշաբաթաթերթ	Խմբագրական կազմ՝ Լիա Խաչիկեան, Գարուն Սարգսեան, Արմինէ Մելիք-Իսրայէլեան	Կայք Քաջիկ Սաֆարեան	Հասցէ՝ Թեհրան, Էնդելաբ պողոտայ, Վալի Աւր քառուղի համար 1048 66495180 66492693
Արտօճատը՝ Լեւոն Ահարոնեան	Գեղարւեստական ձեւաւորում՝ Լիա Խաչիկեան	Մարզական Արման Տէր Ստեփանեան	Հեռախօս-հեռապատճեն՝ 66495208
Խմբագիր՝ Ռոբերթ Սաֆարեան	Գովազդ Անի Ղեւիչեան	Բաժանորդագրութիւն Քաթրին Եաղուբի	Էլ. փոստ hooyes@inbox.com www.hooyes.com

ՊԱՏԳԱՄԱԻՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ «ՅՈՅՍ»-Ի ԷԶԵՐՈՒՄ

2011 թևականի Մարտին առաջին անգամ իրանահայ մանուկի ներկայացուցիչները մասնակցեցին Թեհրանի հայոց թեմի պատգամաւորական ժողովի նիստին: Այս երկուելկէս տարիների ընթացքում «Յոյս»-ը իր էջերում արտացոլել է մեկնաբանել է այդ նիստերի մեծամասնութեան անցուղարձը: ԹՅԹ ՊԺ-ի նիստերին քննարկած նիւթերի մասին տեղեկութիւններ ձեռք բերելու համար ընթերցողը կարող է դիմել մեր հետեւեալ համարներին: Այս նիւթերը հնարաւոր է կարդալ նաեւ մեր կայքում՝ www.hoos.com :

Չամար 71

ՊԺ-ի 2010 թևականի մարտի 9-ի նիստի զեկուցում. պատգամաւորները պահանջում են թեմական խորհրդի կողմից տարեկան բիւջէի աւելի թափանցիկ ձեւ. առաջին անգամ լրագրողները ներկայ են գտնուում ՊԺ-ի նիստին:

Չամար 83

2010 թևականի սեպտեմբերի 15-ի նիստի զեկույց

Չամար 106

2011 թևականի սեպտեմբերի 6-7 նիստերի զեկույց

Չամար 116

Իրանահայ համայնքի կառոյցը Ազատ Մաթեան

Չամար 119

Նորտարւանից Նովոուզ. ՊԺ-ի 2012 թևականի մարտի 6-ի նիստի զեկույց. Ուսուցիչների եւ առաջնորդարանի պատգամաւորականների նոր տեսակի պայմանագրերի եւ փոխհատուցման վճարման հարցը

Չամար 127

2012 թևականի յուլիսի 10-11-17 նիստերի զեկույց. Թեմական խորհրդի միամեայ գործունէութեան քըննարկում. չփակած հաշիւների բացայայտում. համայնքը գոյատեւում է ծախսելով իր գոյքերը:



16 ՆՈՅԵՄԲԵՐ 2012 ԹՅԹ ՊԱՏԳԱՄԱԻՌՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շաբաթ հոկտեմբերի 20-ին աւարտեց թեկնածուների արձանագրութեան ժամկէտը: Ընտրական յանձնախմբի կողմից յայտարարուած ժամանակացոյցի համաձայն, հոկտեմբերի 31-ին հրապարակելու է թեկնածուների վերջնական ցանկը: Նոյեմբերի 5-14, թեկնածուները ժամանակ են ունենալու ընտրական քարոզչութեան համար:

Այս տարի արձանագրութիւնները կատարեցին ընտրական յանձնախմբի կայքի միջոցով: Այս կայքում (patgamavorakan.com) հրատարակում են յանձնախմբի հաղորդագրութիւնները եւ այլ տեղեկութիւններ ընտրութիւնների ընթացքի մասին: Այնտեղ կարող էք գտնել նաեւ Պատգամաւորական ժողովի կանոնագրութիւնը, որից մի հատուած մէջբերում ենք ստորեւ:

Պատգամաւորական ժողովի իրաւասութիւնները կանոնագրութեան համաձայն

- ա– Ընտրել կամ հրաժարեցնել թեմակալ առաջնորդին կամ առաջնորդական տեղապահին:
- բ– Ընտրել Ազգային ժողովի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութեան առթիւ զումարուած յատուկ ընտրական ժողովի պատգամաւորներ:
- գ– Ընտրել Թեմական խորհուրդ:
- դ– Ընտրել թեմի Չաշէքնիչ մարմին:
- ե– Քննել եւ հաստատել Թեմական խորհրդի տարեկան ելեւնտից նախահաշիւը:
- զ– Չաստատել Թեմական խորհրդի կողմից, սոյն կանոնադրութեան նախատեսած սահմաններում, կեանքի կոչուած մարմինների կազմութիւնը եւ նրանց անձնակազմերը:
- է– Չաստատել Թեմական–եկեղեցական տուրքեր եւ սահմանել դրանց գանձման եւ բաշխման միջոցներն ու ձեւերը:
- ը– Քննել թեմակալ առաջնորդի եւ առաջնորդական տեղապահի դէմ յարուցուած հարցերն ու ներկայացուած բողոքները եւ իր վճռահատումը ներկայացնել Վեհափառ Չայրապետին:
- թ– Քննել եւ համապատասխան լուծում տալ Թեմական խորհրդի դէմ ներկայացուած բողոքագրերին:
- ժ– Քննել ու մտքերի փոխանակութիւնկատարել թեմի սահմաններում ստեղծուած ընդհանուր խնդիրների մասին եւ այդ առթիւ ցուցումներ տալ Թեմական խորհրդին:



ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԵՒ ՇԱՅԻՆՇԱՅՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ
ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՑ ՊԱՅԱՆՁՈՒՄ Է

ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԻ ՅԱՄԵՍ ԾՐԱԳԻՐ

Նիկիտ Միրզայեանց

Արդէն շուրջ 8 ամիս է, ինչ անցնում է 11 կէտանոց¹ այն հարցումներից եւ առաջարկներից, որոնք ուղղւած են եղել Ն.Ջուղայի թեմական խորհրդին եւ յարգարժան պատգամաւոր պրն. Ռ. Բեգլարեանին, իր վերջին ընտրապայքարի օրերում: Դժբախտաբար, մինչեւ օրս ոչ մի պատասխան չի հրատարակւել, միայն որոշ խոստումներ, այն էլ բանաւոր, որ շատ հեռու է մեր այս օրւայ իրականութիւնից:

Ինչպես գիդէք, մեր համայնքի ամենակարեւոր խնդիրներից բնակարան չունենալն ու գործազրկութիւնն է, որ մեր կարծիքով արտագաղթի ամենահիմնական պատճառներից է հանդիսանում:

Պետք է ընդունենք, որ «Որտեղ հաց, այնտեղ կաց» ասածուցքը դաժանօրէն ու անխտիր գործում է ո՛չ թէ միայն մեր համայնքում, այլ աշխարհի բոլոր ծագերում, նոյնիսկ մեր հայրենիքում: Երեւի դա մի բնական երեւոյթ է, բայց անմիջապէս հարց է ծագում, բա ի՞նչ եղաւ հայապահպանումը, սպիտակ ջարդը եւ այլ հայակերտման ամպագոռոռ լոզունգները, որոնք եղել են մեր ամենօրեայ թերթերի, միութիւնների եւ դպրոցների առանցքային խնդիրը:

Սիրելիներ, չի կարելի կեղծ հայապահպանման լոզունգներով հայութիւն պահել, եթէ մի ազգ իրեն սոցիալ-տնտեսապէս ապահով չի զգում, չի գոյատեւի եւ չի ծառայի իր ազգային նպատակներին, ինչպէս մեր համայնքը, որ գտնուում է ոչ թէ հայակերտման, այլ գոյատեւման հոգեվարքային փուլում, եւ արտագաղթի ամենօրեայ լուրը

մաշում է մեր հայրենասիրական ոգին: Յիշենք պարսիկ մեծ բանաստեղծ եւ փիլիսոփայ՝ Սադիի այս բանաստեղծական երկտողը, որ դարեր առաջ դիմել է աշխարհի հասարակութեանը խրատելով:

*Այնպէս երաշտը պատեց քաղաքն
Դանասկոս, Որ սիրահարները մոռացան սէրը պերճախօս:²*

Ինչեւիցէ, մեր Նոր Ջուղայի փոքրիկ համայնքի իրողութիւնն էլ որպէս կանոն չի կարող հեռու լինել վերոյիշեալ փորձարկւած բանաձեւից: Եթէ մենք չենք կարող մեր համայնքի «հաց»-ը տալ, առնւազն մտածենք նրանց «կաց»-ի մասին: Դեռ այս պահի դրութեամբ, մեր միջավայրում մի քանի ընտանիք բնակարանային վարձակալութեան սուղ պայմանների պատճառով, իրենց կահկարասին պահ տալով ազգային դպրոցին, բնակում են իրենց հարազատների տներում, եւ շատ ու շատ ընտանիքներ, որոնք հէնց նոյն պատճառով, ճարահատուած դիմում են արտագաղթի: Դիտել տանք, որ ամիսներ առաջ թեհրան քաղաքում Գասպար Ամիրխանեան անունով մի անձնաւորութիւն մի հետաքրքիր յօդուած էր գրել Ալիք օրաթերթում, առաջարկելով թեհրանաբնակ ուսուցիչներին եւ մտաւորականներին, ովքեր գտնուում են ոչ բարւոք վիճակում եւ դիմել են արտագաղթի, հեշտ պայմաններով ազգային բնակարան տրամադրեն, չէ՞ որ նրանք հայապահպանման կարեւոր սիւններից են հանդիսանում, բայց դժբախտաբար, այն «մտաւորականները», որոնք Ալիք օրաթերթում «ազգային» կարեւոր խնդիրներ

են արծարծում, պատասխանելով յօդուածագրին «դեմոկրացիա» քարոզելով յիշեցրել են, որ չի կարելի «ընտրեալներին» բնակարան տրամադրել, մոռանալով, որ Նոր Ջուղայի ազգային բնակարաններն ու խանութները ինչպէս են շռայլօրէն տրամադրուում «ընտրեալների» ընտանիքներին:

Նման կողմնակալ քաղաքականութիւն, մեր ազգայինների կողմից կարագացնի արտագաղթի երեւոյթը: Պէտք է խոստովանել, որ դեռեւս գոյութիւն ունեն մեր համայնքի ազգապատկան կալւածները, որոնք կարող են ծառայել մեր համայնքի «կացի»-ն, այն էլ յստակ, թափանցիկ եւ համեստ մի մշակւած ծրագրով: Ինչպէ՞ս:

Նախ պէտք է պարզենք, որ ինչ ազգապատկան կալւածներ ունենք եւ մասնագէտների միջոցով (այն էլ վարձատրելով հայ կամ պարսիկ), կալւածների, խանութների եւ այլ շինութիւնների շահաւետ գործառոյթը ճշտել, որտեղ հաստատ քաղաքապետարանը եւ մեր յարգելի պատգամաւորը խորհրդարանում, կունենան իրենց առանցքային եւ հիմնարար դերը:

Որպէս կանոն չի կարելի քանի հարիւր տարւայ հողատարածքը, քաղաքի կենտրոնում անխնամ վիճակում պահել, սա քաղաքապետարանին թոյլ է տալիս միջամտել եւ հողամասի գործառոյթը ճշտել, դա ուզում է լինել Լոնդոնում, Փարիզում կամ Իսպահանում:

Չի կարելի կալւածները թողնել բախտի քմահաճոյքին, եւ երբ նորից մի նոր տարի է գալիս, թեմական խորհուրդը ճարահատուած

(թոյլ տուէք կասկածամտօրէն արտայայտուել) իր կառոյցի հովանու ներքոյ գտնուող գործողների վարձը հոգալու համար, ինչ որ կալւած վաճառի եւ յատկացնի իր բիւջէտային բացը լցնելու համար: Ձեզ ենք ներկայացնում մի քանի հարիւր ստորագրութիւն³, երիտասարդ բնակարանագուրկ ընտանիքների կողմից, որոնք պահանջում են թեմական խորհուրդից բնակարանաշինութիւն: Չմոռանանք, որ նման մի համապարփակ ծրագիր, հսկայ աշխատանք է պահանջելու եւ դա պիտի լուծւի սեմինարով, բուռն մասնակցութեամբ, հմուտ եւ բանիմաց մասնագէտների միջոցով, այն էլ հրապարակայնօրէն եւ հայ մամուլի ազատ լրագրողների ներկայութեամբ: Յուսանք «հայապահպանունը» լոկ թղթին չի յանձնւի եւ մեր գործնական քայլերով, ժողովրդին կը համոզենք, որ դժւար օրերին կանգնած ենք իրենց կողքին:

Ծանօթ.

1- 11-կէտանոց պահանջի բովանդակութիւնը

2-

چنان خشکسالی شد اندر دمشق
که یاران فراموش کردند عشق
سعدی

3-

Թեմական խորհրդին դիմողների մակի բովանդակութիւնը, ստորագրութիւններով:

Նոր Ջուղա Հոկտ.2012

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՈՉ ՕՊԱՄԱՅԻՆ,

Նոյեմբեր 6-ին կայանալիք Միացեալ Նահանգներու ընտրութեանց նախօրեակին, Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբը յայտարարեց, թէ ոչ նախագահ Պարաք Օպամա եւ ոչ ալ Մենչուսեցի նախկին նահանգապետ ու Հանրապետական կուսակցութեան թեկնածու Միթ Ռամնի պիտի



արժանանան ամերիկահայութեան աջակցութեան: «Ոչ Պարաք Օպաման, որ բազմաթիւ առիթներով դրժած է հայութիւնը յուզող հարցերու վերաբերեալ իր տուած խոստումները, ոչ ալ Միթ Ռամնին, որ իբրեւ Մենչուսեցի նախկին նահանգապետ, հրապարակայնօրէն չէ բացայայտած ամերիկահայութեան համար կարեւոր նկատուող հարցերու մասին իր կարծիքները, չեն կրցած ապահովել ամերիկահայ քուէարկողներու աջակցութիւնը», կը յայտնէ Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Քեն Խաչիկեան, որ աւելցուցած է. «Հակառակ այն իրողութեան, որ Քոնկրեսի մէջ, նահանգային մակարդակի վրայ, լրատումիջոցներու ու ընդհանրապէս ամերիկեան հասարակութեան մէջ արձանագրուած յառաջընթացին, ամերիկահայերու համար կարեւորագոյն խնդիրներու շուրջ Ամերիկայի գործադիր իշխանութիւններուն արտաքին քաղաքականութիւնը կը շարունակէ պատանդ մնալ Պաքուի եւ Անգարայի թելադրանքներուն: Մինչ մենք կը

ՅԱՆՁՆԱԿԻՈՒՄԲԸ ՉԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՈՉ ՌԱՄՆԻԻՆ

շարունակենք մեր կապերը պահել երկու ընտրապայքարներու ներկայացուցիչներուն հետ, առայժմ որեւէ թեկնածուի նեցուկ կանգնելու նպատակ չունինք»:
Հայ Դատի յանձնախումբի հրապարակած հաղորդագրութեան մէջ կը նշուի, թէ յանձնախումբը պատրաստ



է Նոյեմբեր 6ին յաղթանակ արձանագրած թեկնածուին ներկայացնելու ամերիկահայութեան տեսակետները եւ արժեքները, շարունակելով իշխանութեան եւ արտաքին քաղաքականութեան տարբեր մակարդակներու վրայ պաշտպանել հայութեան շահերը:
Նախագահ Օպաման 2008ին իշխանութեան եկաւ վայելելով Հայ Դատի յանձնախումբի աջակցութիւնը, ամերիկահայերու քուէները: Ան նախընտրական փուլին բազմաթիւ առիթներով խոստումներ տուած է Հայկական Ցեղասպանութիւնը ճանչնալու, Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան արդար լուծում մը ապահովելու եւ ամերիկահայերը յուզող շարք մը այլ հարցերու առնչութեամբ: Իշխանութեան անցնելէ ետք, Հայկական Ցեղասպանութիւնը յստակօրէն ճանչնալու վերաբերեալ Օպամայի խոստումը չկատարուեցաւ: Կառավարման առաջին 90 օրերուն, իր վարչակազմի միջոցով, ան Ապրիլի 24էն առաջ երե-

ւանին ընդունիլ տուաւ «ճանապարհային քարտէս»-ն ու արձանագրութիւնները, որոնք հարթակ հանդիսացան իր խոստումը խախտելու համար: Իր խոստումները խախտելու ամէնաակնառու օրինակներէն են: Քոնկրետսին կողմէ Ցեղասպանութեան ճանաչման քըննարկման ընթացքին իր վարչակազմին ցուցաբերած ընդդիմութիւնը, ինչպէս նաեւ արտաքին գործոց նախարար Հիլըրի Էլիքթընի կողմէ Հայկական Ցեղասպանութիւնը իբրեւ «պատմական բանավէճ»-ի նիւթ որակելու յայտարարութիւնը:

Խոստումը խախտելու նախագահի առաջին ազդանշանը 2009-ի Մարտին եկաւ, երբ Թուրքիոյ խորհրդարանին մէջ ան չօգտագործեց Հայկական Ցեղասպանութիւն եզրը, մինչ ան Թուրքիոյ կոչ կ'ընէր նայիլ իր անցեալին, բաւարարուելով այն նշումով, որ իր անձնական տեսակետը այս հարցով անփոփոխ կը մնայ: Նախագահը նաեւ չէ կատարած իր խոստումները այլ ոլորտներու մէջ: Փոխանակ արտօնելու, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ եւ տեսական լուծում մը գտնուի, հիմնուած ամերիկեան ժողովրդավարական սկզբունքներուն վրայ, ան ատրպէյճանամէտ պաշտօնեայ մը՝ Մեթիու Պրայզային նշանակեց Պաքուի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան: Ան նաեւ փորձեց նուազեցնել Հայաստանին յատկացուող արտաքին օժանդակութիւնը: Նաեւ, հակառակ անոր, որ իբրեւ թեկնածու խոստացած էր Հայաստանի հետ առեւտուրին զարկ տալ, ան այդ գծով որեւէ գործնական քայլ չառաւ: Իր ղեկավարման չորս տարիներու ընթացքին, հայ համայնքին հետ ան գոնէ մէկ անգամ հանդիպում չունեցաւ, հակառակ ամերիկահայերու հետ մօտէն աշխատելու իր խոստումին, ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Ռամնի հայկական հարցերու շուրջ հրապարակայնօրէն չէ արտայայտուած: Ան նաեւ չէ համագործակցած եւ ոչ ալ հանդիպում ունեցած է հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ:

Ցարդ Օպաման եւ Ռամնին չեն պատասխանած Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբին կողմէ իրենց յղուած եւ հայ համայնքին յուզող շարք մը հարցումներուն, որոնց նպատակն է թեկնածուներուն տեսակետները բացայայտել: Ամերիկահայ համայնքի ներկայացուցիչներուն հետ հանդիպելու դիմումները եւս անպատասխան մնացած են

Աղբիւր՝ www.asbarez.com



ՄԵԿՆԱՐԿԵՑ ԶԻՒՍԻՍ-ՀԱՐԱՒ ԱՄՏՈՄԱՅՐՈՒՂՈՒ ՇԻՆԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Անուշ Սկրոջեան

Սկսել է Զիւսիս-Հարաւ ատոմայրուղի շինարարութեան աշխատանքը:

Բետոնեայ ծածկոյթով արագընթաց մայրուղին, որը կը ձգւի Հայաստանի եւ Իրանի սահմանից՝ Մեղրիից մինչեւ Հայաստանի եւ Վրաստանի սահմանային Բաւրա անցակէտը, կունենայ 556 կմ երկարութիւն:

Ըստ 2009 թւականին Հայաստանի Հանրապետութեան եւ Ասիական զարգացման բանկի միջեւ կնքուած շրջանակային ֆինանսաւորման համաձայնագրի, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ 962 մլն դոլարից 500 միլիոնը տրամադրելու է Ասիական զարգացման բանկը: «Զիւսիս-Հարաւ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի կազմակերպութիւն» ՊՈՒԿ-ի գործադիր տնօրէն Արա Յովսէփեանի խօսքով, կառուցելիք մայրուղին կունենայ տարածաշրջանային մեծ նշանակութիւն. - «Այն թոյլ կտայ Հայաստանը առաւել կարծ ճանապարհով կապել ամենամօտ գտնուող տարածաշրջանի նաւահանգիստների հետ: Կապահովի Իրանից դէպի վրացական նաւահանգիստներ եւ հակառակ ուղղութեամբ ամենակարծ երթուղին»: Արարողութեանը մասնակցող Տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարեանի համոզմամբ, կառուցող մայրուղին Հայաստանին տալու է

«տնտեսական մեծ հնարաւորութիւններ»՝ լուծելով «պետական կարելորագոյն հարց»։ Նախարարի խօսքով, կը բացւեն հազարից աւելի նոր աշխատատեղեր: Ծրագրի ճարտարագիտական եւ տեխնիկական վերահսկողութիւնն իրականացնելու է ֆրանսիական Սաֆեժէ ընկերութիւնը: Շինարարական աշխատանքները՝ տեղական հումքով եւ արտասահմանեան գերժամանակակից տեխնիկայով, իրականացնելու է իսպանական «Իզոլուքս Կորսան» ընկերութիւնը, որի ղեկավար Դանիէլ Դոմինգոն «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում տեղեկացրեց, որ շինարարութեան եւրոպական որակն ապահովելու նպատակով հայ մասնագէտների համար կը կազմակերպւեն յատուկ դասընթացներ: Աշխատանքային ժամանակացոյցով նախատեսւած է 18 ամսում աւարտել Երեւան - Արարատ, նոյնպիսի ժամկետում՝ Երեւան-Աշտարակ հատւածների շինարարութիւնը: Աշտարակ-Թալին հատւածի շինարարութեանը տրւած է 36 ամիս: Սայրուղու շինարարութիւնը, ըստ ծրագրի, աւարտուելու է 2016 թւականին:

Աղբիւր՝ www.armenianow.com

ՓԻՂ ՈՒՏՈՂ ԼԵՌՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Վիոլետ Գրիգորյան



Երեկ կեսօրին մերս լուրեր ու սերիալի իր առավոտյան դիտումներն ամփոփեց՝ էս ինչ կեղտոտ ազգ ա, եկանք սրանց մեջ ապրենք: Ասում են՝ մամ, հիշո՞ւմ ես, որ 93-94-ի ցուրտ Չայաստանից Թեհրան էինք գնացել ու մեր երկուտակ քուրքերի վրա զարմացած բարեկամների բացատրում էինք, թե Չայաստանում ինչքան ցուրտ ա, հարազատ քուր ու ախպերներդ շուռ եկան իրար բացատրեցին՝ դե սրանք լեռնային ժողովուրդ են, դիմանում են: Մեկ ա,- ասում ա,- Նազլու քեռակինը ճիշտ էր ասում՝ մեզ ու տեղացիներին որ դազանի մեջ գցեն-եռացնեն, էլի չենք խառնվի, տեղացին էս կողմ կկանգնի, մենք՝ էն կողմ:

Իրանից հայրենադարձները հայաստան-ցիներին պարսկերեն էին ասում տեղացի՝ ջայի, որ չհասկանան՝ իրենց մասին են խոսում: 46 թվի հայրենադարձներին էլ ասում էին՝ քառասունվեցի կամ էլի պարսկերեն՝ չեհեղչի, երբեմն էլ ասում էին՝ չեհեղչիները ջայիներից ավելի վատն են:

Հորաքրոջս աղջկա ընկերուհին՝ պարսկահայ իրանագետ Էմմա Բեգիջանյանը իր տատի մասին անելդոտիկ բան էր պատմում: Փոքր թոռներից մեկը բարձրաձայն դասն ա սովորելիս լինում Յնդկաստանի, թե Աֆրիկայի մասին, մեկ էլ ձեն ա տալիս՝ մեծմամ, մեծմամ, էստեղ գրած ա՝ տեղացիները փղի միս են ուտում: Տատն էլ թե՛ կուտեն, կուտեն, դրանք շան միս էլ կուտեն:

Մորս բան չհամոզած՝ գործի գնացի ու իրիկունը մտա բանջարեղենի խանութ՝ մի քիչ միրգ առնեն: Բանանը ձեռքից ցած դրեց մի տղամարդ, մոտեցավ ու ասեց՝ ես քեզ շատ եմ հարգում երկու բանի համար, մեկ՝ որ տելեֆոնով մեր էրեխեքին ոգևորում ես, մեկ էլ՝ որ Պարսկաստանը թողել, եկել ես էստեղ, հայ ես դառել: Ու շուռ եկավ, հետ դեպի իրա բանանները գնաց: Հետևից ասեցի՝ ինչ ա, Պարսկաստանում հայ չի՞: Ձեռքը թափ տվեց, գնաց: Փորձեցի ասող-

խոսող վաճառողուհուն, որ մեզ էր նայում, համոզել հայությանս վաղեմիությունը, էն էլ կասկածելի շուտ համոզվեց:

Հիշեցի, որ մի երկու ամիս առաջ, երբ մի ուրիշ խանութ էի մտել, որ երշիկ առնեմ, մեկ էլ պարսիկների մի մեծ խումբ մտավ ու մոլորվեց երշիկազգիների կույտի դեմ: Տեսա, որ անցել են ժեստերի լեզվի, ասի՝ չթողնեմ բանը հասնի մկկալուն ու բառաչելուն, մոտեցա օգնեմ: Պարսկերեն հարցրի՝ ինչ են փնտրում, ասեցին՝ մենակ խոզի միս չլինի: Թարգմանեցի, հետո վաճառողի առաջարկները հետ թարգմանեցի, մի խոսքով, մարդիկ առան իրանց երշիկը, գնացին: Վաճառողը շուռ եկավ ինձ սպասարկելու, ասեց՝ էդ ձեր լեզվով էիք խոսո՞ւմ: Ի՞նչ մեր լեզու,- զարմացա,- իմ լեզուն հայերենն ա,- ավր ինձ էլ տելեֆոնի ճանաչում են, հատուկ էլ ռուսերեն բառեր եմ գցում, որ յուրային լինեն: Անուն-ազգանունս էլ, չնայած երբեմն Գևորգյան են ասում (լավ ա՝ չեն կարդացել Ակտուա անուն տպված Դրիդորյանը), բայց էդ -յանը հո կա, դժվար թե իմանան՝ էդ հին պարսկական -յանն ա: Մյուս վաճառողը սրան սաստեց՝ ախչի, սրանք էլ են հայ, բայց երկուսի աչքերն էլ էլի ընդամենը ,հաճախորդը միշտ իրավացի է հետսովետական արտահայտություն ունեին՝ ուզում ես հայ ասենք, հայ կասենք:

70-ականներին Ղարաբաղից Արմյան եկած աղջիկը, որ հետո պիտի ամուսնանար հորաքրոջս տղու հետ, Չայաստանից խաբրիկ մը հարցնող իր համազուղացիներին նամակով նկարագրել էր՝ էստեղ զարմանալի մարդիկ կան, տղեքը երկար մազերով են ու ճղճղած շալվարներ են հագնում, որ կոչվում ա ջինս: Էդ հի՞նչ պյաներ են,- հետ հարց էր եկել, պատասխանել էր՝ հիպի են ասում դրանց: Տարիներ հետո ինքը պիտի ամուսնանար էդ հիպիներից մեկի՝ հորքուրիս տղու հետ:

Հորքուրիս տղուն ու ղարաբաղից կնոջը մի դազանում եռացնելուց մի աղջիկ ստացվեց, որ հոր կիթառը ձեռքն առավ ու ռոք ա երգում, իսկ ժյանգալով հաց չի սարքում միայն էն պատճառով, որ մերն ինքն ա թխում ամեն ինչ ու նրանից ոչ թե տնարար աղջիկ լինել ա ակնկալում, ինչպես իրենց գյուղում էր, այլ համալսարանում լավ սովորել, ինչն աղջիկն անում ա: Ու վայ թե իսկականից լավ լիներ, որ Չայաստանը դառնար մի մեծ դազան, որ-տեղ տեղացի ու սփյուռքահայերին մի լավ իրար հետ եռացնեին, կարող ա լավ շիլա ստացվեր:

Աղբիւր՝ www.tert.am

ՄՈՌԱՑԻԱԾ ՆԵՐԳԱՂԹ

ՌՈՒՄ-ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Տասնհիններորդ դարի առաջին տասնամեակներին տեղի ունեցած ռուս-իրանական կռիւները, որոնց արդիւնքում արեւելեան Հայաստանը անցաւ ռուսական կայսերութեան կազմի մէջ, մեծ կարեւորութիւն ունեն հայ ժողովրդի եւ յատկապէս իրանահայութեան պատմութեան մէջ: Իրանական դասագրքերի մէջ Թուրքմէնչայի պայմանագիրը կոչուում է ամօթալի (նանգին) պայմանագիր. ասուում է, որ դրանով Իրանը կորցրեց իր հողի մի մասը, սակայն, պատմական իրականութիւնն այն է, որ հայերը, Իրանում տիրող ֆեոդալական կարգերի ճնշման ներքոյ, իրենց փրկութիւնը տեսնում էին Ռուսաստանին միանալու մէջ: Դրան է վկայում Իրանի Ատրպատականից դէպի արեւելեան Հայաստան տեղի ունեցած գաղթը, որը շատ առումներով նմանում է երկրորդ աշխարհամարտից յետոյ դէպի սովետական Հայաստան կազմակերպւած գաղթին: Հետեւեալ գրութիւնը, որը փոխ է առնւած Նազար Յ. Գորոյեանցի «Պարսկաստանի Հայերը» գրքից, նկարագրում է, թէ ինչպիսի մեծածաւալ գաղթ տեղի ունեցաւ դէպի Արաքսի միւս ափը: Թւերը զարմանալի չափով մեծ են. խօսքը 40 հազարի շուրջ գաղթականների մասին է: Ասուում է, որ Թաւրիզում մնացին միայն 15, 26, կամ 56 հազար մարդ: Հետաքրքիր է նաեւ, որ այս մասշտաբի արտագաղթ (կամ ներգաղթ) համարեայ մօռացւել է իրանահայ պատմութեան մէջ: Անկախ որեւէ մեկնաբանութիւնից, հետաքրքիր է ծանօթանալ այս իրադարձութեան մանրամասնութիւնների հետ:

Թուրքմէնչայի պայմանագրութենէն անմիջապէս ետքը ռուսերն սկսան ամէն կողմէ Արաքս դառնալ:

Նիկողայոս կայսրը դաշնագիրը վաւերացուց 1828 թ. Մարտ 2-ին, եւ անմիջապէս իրանահայերէն, որ երեւանի ու Նախիջեւանի խանութիւններն այնուհետեւ կոչել «Աշխարհ Հայոց» եւ կայսեր բազմաթիւ տիտղոսների վերայ աւելացնել եւս «Թագաւոր Հայոց Աշխարհի» տիտղոսը:

Ասով ռուսերը նպատակ ունէին յուսադրել դիւրախաբ հայերը, բայց երբ հաստատուեցան եւ ալ հայերի օգնութեան մասնաւոր պէտք մը չզգացին, յայնժամ, 1840-ին, այն կոչուում վերցրին եւ պարզապէս «Երեւանի նահանգ» անւանեցին:

Հայագոյի գնդապետ Լազարեւ, որ 1827-ին նշանակւած էր Թաւրիզի քաղաքապետ՝ ռուսական գրաւումի ժամանակ, սկզբի օրէն ամէն ջանք ի գործ դրաւ հայերը ռուսաց նոր տիրած երկիրն գաղթել տալու համար: Սա իրեն օգնական ընտրեց հայերը գաղթեցնելու գործի համար իշխան Մովսէս Ջաքարեան երկայնաբազուկ Արդուբեանին, Իսահակ Տէր Առաքելեան Ղայթմազեանցին, էնակոլոփեան ու Շարոյան փոխգնդապետներն եւ Դաւիթ ու Աղէքսանդր Ղորղանեան, Շաղաբաթեան Մելիք Շահնազարեան, Մելիք Իւսուֆեան սպաներն եւ ուրիշ վրացի ու ռուս սպա-

ներ, ամէնքն ալ հայագէտ եւ զանոնք որկեց Ատրպատականի գաւառները:

Ասոնք միանալով Ներսէս Աշտարակեցիի առաքած Ստեփաննոս եպիսկոպոսի եւ Նիկողայոս վարդապետի հետ, ցրուեցան Ատրպատականի մէջ: Քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ շրջելով, կը քարոզէին, որ քրիստոնէաներն գաղթեն:

Հայերը կը հաւատային, որ քրիստոնէայ կայսրն եւ կառավարութիւնը Քրիստոսի աշակերտներ էին եւ հետեւապէս այնպէս կը վարւէին հպատակների հետ, ինչպէս հայր մը իւր որդիների հետ, եւ երբեք չկասկածեցին, թէ քրիստոնէայ կայսրութեանց քաղաքական նպատակների դիմաց շամանդաղի մը չափ ծանրութիւն չի ներկայացներ մարդասիրութեան գործը, այլ իրենց նպատակին, իրենց շահին առանց վարանելու կը զոհեն ոչ միայն հայագոյի, համակրօն ժողովուրդների, այլ մինչ անգամ մերձաւոր արիւնակիցներ:

Այն ժամանակ ծերունի Եփրեմ կաթողիկոս Տփլիսի մէջ անկողնուն կը ծառայէր եւ կաթողիկոսութեան հոգսն ու Էջմիածնի կառավարութիւնը Ներսէս արքեպիսկոպոսին թողէր էր, որն հայ հոգեւորականութեան մէջ ամէնէն երեւելի, գուցէ արժանաւորն էր:

Ներսէս շլացած խաբուսիկ յոյսերէ, առաւել եւս ոգեւորւած ռուս կառավարութեան ըրած մեծամեծ խոս-



տումներէն, սկսեր էր նամակներով եւ կոնդակներով Ատրպատականի քահանաներին համոզել, որ ամէն միջոց՝ յորդոր, խրատ, սպառնալիք ի գործ դնեն հայերն Ռուսիա չեցնելու համար:

Քահանաներն իրենց անկարող այսպիսի մեծ խընդորի մը հետեւանքները չափելու, կշռելու ու վերլուծելու, իրենց ամէն վստահութիւնը դնելով Ներսէսի դատողութեան եւ աչալըջութեան վերայ եւ իրենց միայն պարտք համարելով եկեղեցական գլխի պատւերին անսալ, ամէն ջանք թափեցին անոր ցանկութիւնն ու հրամանը կատարելու:

Այսպէս, հրամայած կաթողիկոսէն, յորդորած եպիսկոպոսէ, վարդապետներէ ու քահանաներէ, հրապուրած ռուսաց ըրած մեծամեծ խոստումներէ, վստահացած հայազգի Լազարեան եւ ուրիշ հայ եւ վրացի զօրապետանց ու սպայից խօսքերէն, նամանաւանդ ահաբեկած տեղացիների ապագայ վրէժխնդրութենէն՝ իբրեւ հաւատակից ռուսաց,-հայերն յուսացին իրենց փրկութիւնը գտնել Ռուսաստանի մէջ եւ կարծեցին, որ անգամ մը ոտքերնին դնէին այն երկիրն, ամէն դժարութիւն ու նեղութիւն պիտի վերջանային եւ այնուհետեւ ազատ պիտի կարենային աշխատիլ ու հանգիստ ապրիլ:

Ինչպէս շատ մը անծեր, նոյնպէս տէրութիւններ որեւ-

է բանի արժէքն այն ատեն միայն կը հասկանան, երբ զայն կը կորսնցնեն: Այսպէս եւ տեղական կառավարութիւնը, երբ տեսաւ, որ ռուսերն այնչափ ջանք կընէին հայերն իրենց երկիրն գաղթել տալու համար, արթնցաւ, բայց ուշ, եւ սկսաւ զանոնք սիրաշահել եւ մեծ խոստումներ ընել անոնց:

Թագաժառանգ Աբբաս Միրզան, իւր ժամանակի հանճարեղ գլուխներէն մէկը, երբ զգաց այս գաղթման գէշ հետեւանքները, իրեն աջակից ու խորհրդակից ունենալով Անգլիոյ դեսպան՝ գնդապետ Մաքրոնալդն, սկսաւ գաղթականութեան առաջն առնելու համար ջանքեր ընել: Անգլիացի Մ.Վելլոք եւ Ֆրանսիացի Մ.Սեմենոյ ուրիշ անգլիացի սպաների եւ պարսիկ պաշտօնեաների հետ զաւառներն ղրկւեցան, որպէսզի համոզեն հայերն ու նեստորականներն (ասորիները,) որ չգաղթեն:

Ասոնք կը նկարագրէին Ռուսիա իբր երկիր քստորանաց: Սակայն գաղթող զաւառացի հայերէն շատերը Վելլօքին, Սեմենոյին եւ այլոց կը մերժէին անսալ:

Թագաժառանգ Աբբաս Միրզա իւր կողմն շահեց Ս. Բարդուղիմէոս վանքի վանահայր Իսրայէլ եպիսկոպոսն, որ այս ատեններն Սալմաստ¹ կը գտնէր: Այս եպիսկոպոսն համոզմամբ, թէ առանց համոզման հակառակեցաւ գաղթմանն եւ հոգւով ու սրտով գործին

մէջ մտնելով սկսաւ ամէն տեղ շրջել, քարոզել, յորդորել ո՛չ հայերն այլ եւ ասորիներն, որ չգաղթեն եւ մինչեւ անգամ բռնի արգիլեց շատերին:

Այսպէս, երկու կառավարութիւններն ջանքեր կը թափէին եւ զոհողութիւններ յանձն կառնէին հայերն իրենց կողմը շահելու համար. բայց քանի որ գաւառների հայերն իրենց կողմը մասամբ իւր թաւրիզին կը նայէին եւ այս քաղաքի բնակչաց ընթացքին կուզէին հետեւիլ, թագաժառանգ Աբբաս Միրզան ամէն ջանք ի գործ կը դնէ թաւրիզի հայերն գաղթելէ արգիլելու համար: Նա կը կանչէ արքունի հիւսնապետ Նազար Շահբազեանն եւ անոր կը յանձնէ մի հրովարտակ, որով կը յայտարարէր, թէ հայերէն ոմանց բռնած հակառակ ընթացքին պատճառով, համայն հպատակներն, որոնք միտք չունէին գաղթելու, պատժելու վախէն կը գաղթեն, ուստի ապահովութիւն կը տրուի, որ ոչ ոքի նկատմամբ բռնութիւն ու անարդարութիւն չպիտի լինի եւ մնացողներին մեր կողմէ գթութիւն պիտի շնորհուի:

Ստորեւ թարգմանաբար կը ներկայացնենք սոյն հրովարտակն:

Բարձրագոյն հրաման եղաւ, որ թաւրիզի հայոց թաղապետն ու ալեւորներն իմանան, թէ այս ժամանակ Նորին Բարձրութեան արդարադատութեան

առաջ կեցողներին խոնարհաբար տեղեկացնեն, որ մի քանի հայերի ունեցած սխալ ընթացքի պատճառով համայն հպատակներն մեր հատուցումներէն ու պատժատուութենէն երկիւղ կրելով, հայրենիքը լքանելու ցանկութիւնը չունենալով հանդերձ, հատուցման վախէն յօժարեր են հայրենիքը թողնել: Ուստի այս շնորհագեղ հասցեով, որ պաշտպանութեան, ապահովութեան ու անդորրութեան փառաց աղբիւրէն ելեր է, կը կարգադրենք, որ ոչ մէկ կողմէ եւ ոչ ոքէ որեւէ հարստահարութիւն եւ որեւէ բռնութիւն հայերէն որեւէ մէկի վերաբերմամբ տեղի չպիտի ունենայ եւ ով որ իւր հայրենիքը մնալու ու հաստատուելու յօժարի, մեր կողմէն կատարեալ գթութիւն ու քաղցրահայեցութիւն անոր նկատմամբ ի գործ պիտի դրուի, եւ ով որ ցանկանայ մեր ներկայութեան սենամքը պատուրնկալ լինելով բարձրագոյնին դէմ յանդիման խօսիլ եւ մեր կողմէն խորխոյս ու անդորրութիւն ձեռք բերել, մենք հասարակաց մուտք տալով, մեր ներկայութեան շնորհունկալութիւնը տուր ենք»:

*Տւեալ
Օրհնեալ Ռամազան ամսին մէջ
Չիջրէթի 1243.ին.*

Ո՞Վ Է «ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ» ԳՐԹԻ ՀԵՂԻՆԱԿ ՆԱԶԱՐ Յ. ԳՈՐՈՅԵԱՆՅԸ

Նազար Յ. Գորոյեանցի գրչին պատկանող «Պարսկաստանի Հայերը» գրիքը արժեքաւոր աղբիւր է իրանահայութեան պատմութեան մասին: Գրիքը հրատարակւել է 1898 թւականին թաւրիզում եւ կրում է հետեւեալ ենթավերնագիրը. «Պատմական, տեղագրական եւ վիճակագրական համառօտ տեղեկութիւններ Պարսկաստանի հայերի մասին՝ ամենահին ժամանակներէ մինչեւ 1898 թ. : Այն վերահրատարակւել է 1968 թւականին թեհրանի «Մոդեռն» տպարանի միջոցով: Նազար Յ. Գորոյեանցը ծնւել է 1843 թւականին թաւրիզում, ուսանել է Մալթայում, որպէս պետական պաշտօնեայ պաշտօնավարել է Պոլսում եւ Բաղդադում, աշխատել է թաւրիզի հեռագրատանը, իսկ յետոյ անցել է առետրի ասպարէզ եւ հիմնել է իր սեփական ընկերութիւնը: Նա հետաքրքրուել է նաեւ թատրոնով եւ կազմակերպել է մի շարք բեմադրութիւններ: Եւ ինչպէս արդէն վկայում է վերոյիշեալ գիրքը, հետաքրքրուել է պատմական ուսումնասիրութեամբ: Նա Տիրապետել է Հայերէն, Պարսկերէն, Արաբերէն, Ֆրանսերէն եւ Անգլերէն լեզուներին: Թղթակցել է հայ եւ միջազգային մասնուլիմ՝ «Դէյլի Նիւզ» եւ «Ֆիգարո» օրաթերթերին:



Բացի այս հրամանագրեն, թագաժառանգը հարիւր թուման(մերձ 1600 Ֆրանկ) տալով Նազար Շահբազեանին, կպատուիրտ տանել իւր սենեկապետին հետ եւ յանձնել Թաւրիզի աւագ քահանայ Տէր Յովհաննէս Տէր Յովսէփեանին, եւ իւր կողմէ ըսել, որ այս գումարը գահաժառանգը ձեզ պարգեւ կը դրկէ եւ այսուհետեւ եւս տարին հարիւր թուման ռոճիկ պիտի տայ քեզ այն պայմանով, որ չգաղթես, այլ մնաս:

Տէր Յովհաննէս կը մերժէ եւ իւր գաղթման որոշումն կը յայտնէ:

Նազար Շահբազեան կէս գիշերին երկրորդ անգամ կերթայ քահանայի մօտ եւ ամէն միջոցով կը ջանայ համոզել, որ չմեկնի: Բայց սա քիչ մը ակնածելով Ներսէս արքեպիսկոպոսէն, որ հրամայեր էր գաղթել եւ ուրիշներն եւս իւր հետ գաղթեցնել, քիչ մը ձանձրացած տիրող ծանր վարչակարգէն եւ քիչ մը հրապուրած անծանօթ գալիքէն, քանզի այդ ատեն թէ ռուսերը եւ թէ իրենց տիրած երկիրները պարսկահայոց բոլորովին անծանօթ էին, անդրդուելի կը մնայ իւր որոշման մէջ: Նազար, ճարահատեալ, պարգեւն գահաժառանգին կը վերադարձնէ: Այսուհանդերձ, չյուսահատելով, շատ ջանքերէ ետքը, կը յաջողի մէկ քանին համոզելով, միւսներն կապած բեռներին ստիպմամբ քակելով, պահել, որ չգաղթեն:

Այսպէս, Նազարի ջանքերի, Անգլիոյ գործակատարի յորդորների եւ թագաժառանգի տւած հրովարտակի հետեւանքով քաղաքի հայերէն մերձ տասն եւ հինգ տուն չգաղթեցին:

«Արծազանք»ները մնացողների թիւը վեց տուն կը հաշւէ, ուրիշներն 26 կամ 56, բայց ես ծեր մարդոց բերանէ լսածներս վերայ 15 տունը աւելի ճիշտ կը համարեմ:

Քանի որ Տէր Յովհաննէս չհամոզուեցաւ մնալ, Աբբաս Միրզան յատուկ սուրհանդակով մը հրամանագիր դրկեց Յամադան: Եւ այն տեղի աւագ քահանային, որ նոյնպէս Տէր Յովհաննէս անունը կը կրէր, հրամայեց («չափարի») գալ Թաւրիզ եւ հովել հայ ժողովուրդն:

Երբ սա Թաւրիզ հասաւ, թագաժառանգն զւարճախօսութեամբ ըսեր է՝ այն Տէր Յովհաննէս չլինի, այս Տէր Յովհաննէս լինի, եւ Թաւրիզին տալիք թոշակը շնորհեց Յամադանին: Եւ իրօք, այս թոշակը մինչեւ օրս կը շարունակուի տուիլ Տէր Յովհաննէսի սերնդին, ի Յամադան:

Գաւառացի հայերէն ոմանք եւս, Թաւրիզ մնացողների օրինակին հետեւելով, ոմանք Մ. Վելլօքի եւ Սեմեոսի յորդորներին ու խորհուրդներին անսալով, այլք, մամանաւանդ Սալմաստի բնակիչների մէկ մասը, Իսրայէլ եպիսկոպոսի ջանքերով ու ստիպումներով արգելքի տակ ըլլալով, մնացին իրենց տեղերը:

Այսօր Թաւրիզ եւ գուցէ գաւառներն այսքան հայ գըտ-նըւելն մասամբ իւրիք Նազար Շահբազեանին կը պարտինք, քանզի այն քանի մը ընտանիք եթէ մեկ-

նած լինէին ուրիշների հետ, ալ այն ատեն որեւէ ապաւեն, վստահութեան յոյս չունենալով, ռուսաց կողմը գաղթողներէն ոչ ոք կը վերադառնար եւ այսպիսով այժմ Ատրպատականի մէջ շատ աննշան թիւով հայ պիտի գտնուէր: Այսուամենայնիւ, Ատրպատականի հայոց մեծագոյն մասն, իսկ նեստորական ասորիներէն մերձ հարիւր տուն միայն գաղթեցին:

Հայերի այս գաղթի հետեւանքով, ըստ պարսիկ կառավարիչների եւ Լազարեանի վկայութեան, պարսից տէրութիւնը տարեկան մերձ հարիւր հազար թուման (մերձ 600,000 Ֆրանք) ուղղակի եկամուտ կորսնցուց, բացի անուղղակի կերպով ստացուող եկամուտներէն:

Հաշտութիւնը կնքելէն անմիջապէս յետոյ հայերն սկըսան Ղազվիտ, Միանէտ, Սալմաստ, Ուրմիայէ եւ Մարաղայի, Քիւրդիստանի ու Խոյի շրջաններէն եւ Թաւրիզէն ու իր շրջականերէն, գոյքերնին կրցածնին չափ վաճառել որեւէ գնով, իսկ չկրցածնին ասոր-անոր ընծայել, տներնին եւ ուրիշ անշարժ կալւածներն այսպէս թողուլ եւ խումբ-խումբ դէպի Երասխ յառաջանալ:

Թէեւ դաշնադրութեան 12-րդ յօդուածին համեմատ գաղթողները կրնային կալւածները մինչ 5 տարի վաճառել, սակայն ցուցմունքով գաղթողների կալւածները գնողներ չեղան:

Գաղթողների ճամբորդութիւնը առանց դժուարութեան ու վտանգի չեղաւ, քանզի գաղթականք ոչ միայն ուտելիք դժուարաւ կը գտնէին, կամ մերթ երբեք չէին գըտներ, այլ անոնք, որ վերադարձող զօրքի անմիջական պահպանութեան ներքոյ չէին, ճամբին կը կողոպտուէին: Քիւրդիստանէ գաղթող հայերը մեծաւ մասամբ դարանակալ քիւրդերէ կողոպտուեցան եւ սպանուեցան ճամբի վերայ:

Ըստ ռուսական վիճակագրութեան, երկուք ու կէս ամսի մէջ 8,000 ընտանիքէ կամ 40,000 հոգիէ աւելի Արաքսէն ռուսաց հողն անցան: Ոմանք գաղթողների թիւն 80,000 կը հասցնեն, բայց այս յայտնի չափազանցութիւն է:

1) Սալմաստ գաւառում ոչ 1826-28 թ.թ. եւ ոչ էլ դրանից առաջ, Ս.Բարդուղիմէոս անունով որեւէ վանք, եկեղեցի կամ ուխտատեղի գոյութիւն չի ունեցել: Սալմաստի Հաֆթան գիւղի մերձակայքում գտնուում էր Ս.Թադէոս անունով մի ուխտատեղի, որ հաւանաբար ժամանակին եղել էր վանք եւ ունեցել իր վանահայրը: Մեր կարծիքով, Ներսէս Արքեպ. Աշտարակեցու ակնարկած վանքը Տաճկահայաստանի Աղբակ գաւառի պատմական Ս. Բարդուղիմէոս վանքն է: Պիտի ենթադրել, որ Աղբակին սահմանամերձ Ատրպատականի գաւառների հայ համայնքները վարչականօրէն երբեմն ենթակայ են եղել Ս. Բարդուղիմէոս վանքի եպիսկոպոսներին կամ ճանաչել նրանց հոգեւոր հեղինակութիւնը:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԸ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ «ՅՈՅՍ»-Ի ՅԱՐՑԵՐԻՆ

ԹՅԹ Պատգամաւորական ժողովի 15-րդ նստաշրջանի ընտրութիւնների սեմին, նախորդ համարում հրատարակեցինք ԻԻՅ խորհրդարնում Թեհրանի եւ երկրի հիւսիսային շաջանների պատգամաւոր՝ Կարէն խանլարեանի, «Արաքս» շաբաթաթերթի խմբագիր՝ Սովակէ Քէշիշեանի եւ 14-րդ Պատգամաւորական ժողովի դիւանի անդամ՝ Ռոբերտ Մարգարեանի պատասխանները: Զարցերը վերաբերում էին ՊԺ-ի կարեւորութեան, Կուսակցականութեան եւ ՊԺ-ի որոշումների միջեւ յարաբերութեան եւ Մամուլի դերին: Այս համարում դիմել ենք առանձնապէս ՊԺ-ի մի քանի անելի ակտիւ պատգամաւորներին: Նրանց պատասխանները ներկայացնում ենք ստորեւ եւ կրկին հրաւիրում ենք բոլոր ազգային գործիչներին եւ բոլոր նրանց, ովքեր գործնական փորձառութիւն կան տեսական մասնագիտութիւն ունեն իրենց տեսակէտները յղեն մեզ, հարցը անելի լուսաբանելու նպատակով:

Նոյեմբերի 16-ին տեղի են ունենալու ԹՅԹ Պատգամաւորական ժողովի 15-րդ շրջանի ընտրութիւնները, ինչը լաւ առիթ է նաեւ քննարկել մի շարք անելի հիմնական հարցեր:

Ռ.Ս.



Ռուբիկ Սարգսրեան

Առաջնահերթ խնդիրը միմեանց հանդուրժելն ու իրար հետ համագործակցելն է

Շուտով Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի նոր ընտրութիւններ են լինելու: Որն է այդ ընտրութիւնների կարողութիւնը: ՊԺ-ի որոշումներն ի՞նչ նշանակութիւն ունեն իրանահայ մարդու կեանքում:

Համայնքի բարձրագոյն մարմնի ընտրութիւնները, կարծում են, ամենակարեւոր և դերակատար ընտրութիւններն են մեր համայնքի կեանքում: Իւրաքանչիւրիս պարտքն է լուրջ վերաբերւել եւ պահանջատէր լինել: Ազգային բոլոր գործադիր մարմինները ընտրւում են Պատգամաւորական ժողովում, կրթական և

դպրոցների հարցերը քննարկման նիւթ են դառնում ՊԺ-ում: Համայնքի ներկայի և ապագայի մտահոգիչ հարցերը կարող են ՊԺ օրակարգում ընդգրկւել եւ որոշումներ կայացւեն այդ հարցերի շուրջ, որոնք մեծ ազդեցութիւն կարող են ունենալ մեր համայնքի կեանքում: Համայնքի ապագայի հարցերն ու ընդհանուր ռազմավարութիւնը իր վերջնական հաստատումն է ստանում այդտեղ:

Արդէն երկար տարիներ է, որ դաշնակցական թեկնածուները մեծամասնութիւն են կազմում ՊԺ-ում

Եւ դա նշանակում է, որ ՊԺ-ում քւէարկուղ կարելոր հարցերի մասին նախապէս որոշում է կայացուում այդ կուսակցութիւնում: Այս պայմաններում ոչ դաշնակցական եւ անկախ թեկնածուներն ի՞նչ դեր կարող են խաղալ ՊԺ-ում:

Նախ՝ մենք չպէտք է մեղաւոր փնտրենք այս հարցում, ոչ դաշնակցականների ու անկախականների առաջնահերթ խնդիրը միմեանց հանդուրժելն ու իրար հետ համագործակցելը, ինչպէս նաև միասնական ճակատով հանդէս գալը, դեմոկրատ լինելն ու ակտիւութիւն ցուցաբերելն է: Դուք եթէ ՊԺ-ի անցեալ 12 տարւայ պատմութիւնն ուսումնասիրէք, կը տեսնէք, որ փոքրամասնութիւնը ևս ունենում է իր դերը: Այն տերմինները, որոնք օգտագործում էին ոչ դաշնակցականները և բորբոքման պատճառ էին դառնում ՊԺ-ում, օրինակ՝ թափանցիկութիւն, ժողովրդավարութիւն, հանդուրժողականութիւն և այլն, հիմա օգտագործում են ՊԺ-ի բոլոր անդամները: Անցեալում յանձնախմբեր կեանքի կոչելը դիմադրութիւն էր առաջացնում, սակայն հիմա նորմալ երեւոյթ է համարում: ՊԺ-ում դաշնակցութեանը համակրող անդամներին չպէտք է միատարր ու միատեսակ դիտել, նրանք էլ վերջապէս սրտցաւ ազգայիններ են ու շատ իրականութիւններ տեսնում ու շօշափում են: Նրանց աչքերը փակ չեն և նստած չեն սպասում միայն հրահանգներ կատարելու: Դուք նայէք թուներան դպրոցի հարցի կապակցութեամբ տարբեր դիրքորոշումների առկայութեանը, որոնք ցուցաբերում են կուսակցութեան տարբեր անդամներն ու համակիրները: Սա մի կուսակցութեան զարգացման նշաններից կարող է համարել, յոյսով ենք դաշնակցութիւնը զարկ կը տայ դինամիկ մօտեցմանը իր կուսակցութեան կառոյցներում և կը փրկի կուսակցութիւնը լճացումից:

Շատ է պատահել, որ ոչ դաշնակցականները որոշիչ դեր են խաղացել տարբեր դիրքորոշումներում, նրանք մասնակցում են բոլոր յանձնաժողովների աշխատանքներին: Այս բոլոր հարցերը մի կողմ դրած, որևէ հաւաքականում ընդդիմադիր ուժի առկայութիւնը ապահովում է այդ հավաքականութեան առողջ և դինամիկ մթնոլորտը:

Ի՞նչ պիտի անել այլ խմբակցութիւնների – անկախ անձանց մասնակցութիւնը համայնքի կառավարման գործերում խրախուսելու համար:

Նախ՝ մեր համայնքի գործադիր մարմին՝ Թեմական խորհուրդը պէտք է առանց որեւէ խտրականութեան վերաբերւի իր համայնքի բոլոր անդամներին ու կառոյցներին: Ներկայիս Թեմական խորհուրդը եւ յատկապէս նրա նախ նախագահ՝ պրն. Էդւարդ Բաբախանեանը շատ լաւ են ըմբռնում եւ լաւ մօտեցում են ցուցաբերում այդ հարցում: Էդւարդ Բաբախանեանը տարբեր գործերով ցույց է տւել, որ խտրականութիւն չի դնում

համայնքի տարբեր կառոյցների միջեւ: Միւս կողմից հենց իրենք՝ այդ խմբակցութիւններն ու անկախ անհատները պէտք է հետաքրքրութիւն ցուցաբերեն ու ակտիւ մասնակցութեան ցանկութիւն դրսեւորեն համայնքի տարբեր աշխատանքներում: Երբեմն, դժբախտաբար, այդ կառոյցները կամ անհատներն իրենց պասիւութիւնը արդարացնելու համար մեղադրում են ազգային կառոյցներն ու դրւածքը:

Ինչո՞ւ մեր համայնքում բազմակուսակցութիւն չկայ:

Շատ պարզ է, որովհետեւ ուրիշ կուսակցութիւնների համակիրներ ու անդամներ կազմակերպւած կառոյցներ չկան: Աւանդական կուսակցութիւնները կարող են համայնքում ծանօթացնեն իրենց ծրագրերին և գաղափարախօսութեանը, սակայն կարծես ներկայ պայմաններում ժողովուրդը այնքան էլ չի հետաքրքրւում կազմակերպւած քաղաքական աշխատանքներով: Սակայն սա չի նշանակում, որ համայնքում չկան տարբեր կուսակցութիւններին համակրող մարդիկ: Կարծում են, ներկայ պայմաններում միայն դեմոկրատական քաղաքական սկզբունքների հիման վրայ է հնարաւոր համայնքում կազմակերպւած քաղաքական ու ազգային աշխատանքներ ծաւալել և դա համայնքի զարգացման ցուցանիշներից մէկը կը լինի: Դուք էլ, որպէս լրատւամիջոց, այդ կապակցութեամբ պարտականութիւններ ունէք. այստեղ չպէտք է պահպանողական կամ միակողմանի դիրքորոշում ցուցաբերել:

Թ.Յ.Թ. ՊԺ-ի վերջին նիստերին լրատւամիջոցների ներկայացուցիչները նոյնպէս մասնակցում էին: Ինչպէս էք գնահատում այդ մասնակցութեան արդիւնքները:

Ոչ բաւարար: ՁԼՄ-երի բացակայութիւնը շատ էր: Համայնքի տարբեր կարևոր հարցերին հետևողական մօտեցումները բացակայում էին ՊԺ-ի նիստերի մասնակից ՁԼՄ-երի մօտ: Միգուցէ մեր մամուլը այնքան էլ էներգիա և ժամանակ չունի տրամադրելու այդ հարցերին, սակայն իրավիճակը դա է պահանջում: ՊԺ-ում արծարծւած տարբեր հարցեր երբեք չեն արտացոլւել մամուլում, կամ էլ շատ ընդհանուր և մակերեսայնօրէն են ներկայացւել: Մեծ պայքար է գնացել մամուլի ներկայութեան իրաւունքը ձեռք բերելու համար, բայց իմ կարծիքով մամուլը չի կարողացել իրեն արդարացնել, յատկապէս ոչ դաշնակցական մամուլը: Այստեղ լրատւամիջոցների սակաւաթիւ լինելու պատճառով, կարծում են, պէտք է տեղ տրւի նաեւ կայքէջներին, որոնց թիւը շատ չնչին է: Յուսով են, դրա համար էլ պայքարի անհրաժեշտութիւն չի զգացւի եւ ապագայ Պատգամաւորական ժողովը եւ յատկապէս ապագայ ՊԺ-ի դիւանը այդ անհրաժեշտութիւնը կզգայ:

Էմիլ Մնացականեան

Անցեալի օրինակով գաղափարական տարանջատում գոյութիւն չունի համայնքի մէջ



Շուտով Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի նոր ընտրութիւններ են լինելու: Ո՞րն է այդ ընտրութիւնների կարեւորութիւնը: ՊԺ-ի որոշումները ի՞նչ ազդեցութիւն ունեն իրանահայ մարդու կեանքում:

14-րդ Պատգամաւորական ժողովը իր քառամեայ գործունէութեան շրջանում յաջողեց յանձնաժողովների դրածք առաջացնելով, ստեղծել այն ենթակառուցը, որով պէտք է հնարաւոր դառնայ կազմել հեռանկարային ծրագրեր համայնքի ղեկավարման համար և ազդեցիկ հսկողութիւն ունենալ նրանց գործադրութեան վրայ: Սակայն նոր դրածքի ձեւաչափում պահանջուում է աւելի աշխույժ գործունէութիւն և աւելի բարձր ներդրում պատգամաւորների կողմից: 14-րդ Պատգամաւորական ժողովը իր լաւագոյնը փորձեց ներդնել, սակայն բարձրագոյն արդիւնքների հասնելու հեռանկարով է, որ կարևորութիւն է ստանում յառաջիկայ շրջանի ընտրութիւնները: Բւերակութեան արդիւնքում, համայնքի լաւագոյն ուժերին Պ.Ժ-ի կազմում ներգրաւելով կարելի է ականատես լինել համայնքի ապագային առնչուող ծրագրերի կազմաւորման, որոնք իրենց ազդեցութիւնը կունենան իւրաքանչիւր իրանահայ հայրենակցի կեանքում:

Արդէն երկար տարիներ է, որ դաշնակցական թեկնածուները մեծամասնութիւն են կազմում ՊԺ-ում եւ դա նշանակում է, որ ՊԺ-ում քւեարկուող կարեւոր հարցերի մասին նախապէս որոշում է կայացւել այդ կուսակցութիւնում: Այս պայմաններում ոչ դաշնակցական եւ անկախ թեկնածուները, ի՞նչ դեր կարող են ունենալ ՊԺ-ում:

Կուսակցութիւնների և խմբակցութիւնների ներկայութիւնը Պ.Ժ.-ում դրական կարելի է համարել այն առումով, որ զգայուն խնդիրների շուրջ իւրաքանչիւրն իր հիմնաւորումները կարող է ունենալ, որոնք քննարկւել են ժողովից դուրս: Այս կարգի քննարկւած մտքերի բախումը ժողովում՝ կարող է ապահովել ժողովի ճիշտ կողմնորոշումը և լաւագոյն որոշումների կայացման գործնթացը: Անցեալ շրջանում, տարբեր հարցերի շուրջ ստեղծւել են խմբաւորումներ և տեղի են ունեցել մտքերի բախում, որոնք օգտակար են հանդիսացել:

Ի՞նչ պիտի անել այլ խմբակցութիւնների եւ անկախ անձնաւորութիւնների մասնակցութիւնը համայնքի կառավարման գործերում խրախուսելու համար:

Միութիւնները իրենց յարկի տակ կարող են կազմակերպել միութենական հանդիպումներ եւ խորհրդակցութեան դնել այս հարցը:

Ինչո՞ւ մեր համայնքում բազմակուսակցութիւն չկայ: Անցեալի օրինակով գաղափարական տարանջատում գոյութիւն չունի համայնքի մէջ: Կան տարակարծութիւններ համայնքային խնդիրների շուրջ միայն, որի համար կազմուում են խմբաւորումներ և դա բաւարարում է համայնքի պահանջներին: Խմբաւորումները կարող են վերածւել կուսակցութիւնների միայն բնական ընթացքով ա՛յն ժամանակ, երբ գոյութիւն կունենայ ենթահողը և համայնքն ինքը դրա պահանջը կզգայ: Արհեստականօրէն ստեղծւած կուսակցութիւնները չեն գոյատևում ընդհանրապէս:

ԹՅԹ ՊԺ-ի վերջին շրջանում, մամուլի ներկայացուցիչները մասնակցում էին նիստերին: Ի՞նչպէս էք գնահատում այդ մասնակցութեան արդիւնքները:

Դրական էր այն առումով, որ պատգամաւորները այլեւս իրենց փակ դռների հետեւում չէին տեսնում և դա օգնեց ժողովին աւելի պատասխանատու զգալ համայնքի առջեւ: Կատարւած տեղեկատուութեան արդիւնքում համայնքը նաեւ կարողացաւ մասնակից լինել հարցերի զարգացման ընթացքին եւ ինչ որ չափով բաւարարւած զգալ իրեն:

Ժողէֆ Մեհրաբեան

Արդեօք «ՐԱՖՖԻ», «ՍԻՓԱՆ», եւ «Ի.Ա.Մ.Մ.»... սրանք խմբակցութիւններ են, թե՛ մարզամշակութային միութիւններ



Շուտով Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի նոր ընտրութիւններ են լինելու: Ո՞րն է այդ ընտրութիւնների կարեւորութիւնը: ՊԺ-ի որոշումները ի՞նչ ազդեցութիւն ունեն իրենազայ մարդու կեանքում:

Թ.Յ.Թ. Պատգամաւորական ժողովը համայնքի ղեկավարման բարձրագոյն կառոյցն է եւ հէնց դրանից ելնելով կարելորում է՝ պատկան ընտրութիւնը:

Բնականաբար ժողովի որոշումները՝ երբեմն ուղղակի եւ կարճաժամկետ, երբեմն էլ՝ երկարաժամկետ ազդեցութիւն են թողնում:

Բայց կայ կարելոր մի հանգամանք եւ դա ժողովի մակարդակն է: Ինչքան մեծ որոշումներ, այնքան ազդեցիկ:

Արդէն երկար տարիներ է, որ դաշնակցական թեկնածուները մեծամասնութիւն են կազմում ՊԺ-ում եւ դա նշանակում է, որ ՊԺ-ում քւեարկող կարելոր հարցերի մասին նախապէս որոշում է կայացուել այդ կուսակցութիւնում: Այս պայմաններում ոչ դաշնակցական եւ անկախ թեկնածուները, ի՞նչ դեր կարող են ունենալ ՊԺ-ում:

Պատգամաւորական ժողովում կենսական հարցերը իրենց բնոյթով չեն եղել այնպիսին, որ կուսակցութիւնը միջամուխ լինի: Ոմանք մտածում են, որ կուսակցութիւնը անէն օր ժողով է գումարում եւ բոլոր հարցերում թելադրում իր կամքը: Ո՛չ, այդպէս չէ՛:

Վերջապէս ժողովում դաշնակցական եւ ոչ դաշնակցական՝ համակիր եւ ընդդիմադիր՝ պատգամաւորների կարողականութիւնը մի չափի է, որ միջամուխ լինելու անհրաժեշտութիւն չի նկատում, կամ էլ նւագոյն չափի է:

Ի՞նչ պիտի անել այլ խմբակցութիւնների եւ անկախ անձնաւորութիւնների մասնակցութիւնը համայնքի կառավարման գործերում խրախուսելու համար:

Ինձ չի թւում կայ որեւէ արգելք ցանկացած հայ մարդու համար աշխատանքներին մասնակցելու: Արդէն հերթական Թ. խորհուրդները իրենց գործունեութեան շրջանի սկզբում մամուլով կոչ են ուղղում եւ բոլորին հրաւիրում են գալ եւ մասնակից լինել աշխատանքներին: Այս կոչը բոլորի՝ համար է: Իսկ եթէ այս հարցով առանձնացնում ենք խմբակցութիւններին, ապա պէտք է հասկանալ խմբակցութեան իմաստը, հասցնել եւ անունը: Մի բան, որ այսօր շատ էլ պարզ չէ:

Արդեօք «ՐԱՖՖԻ», «ՍԻՓԱՆ», եւ «Ի.Ա.Մ.Մ.»... սրանք խմբակցութիւններ են, որոնց նկատի ունէք դուք, թէ մարզամշակութային միութիւններ: Իսկապէս լաւ կը լինի իմանալ այդ խմբակցութիւնների անունները, նրանց գաղափարների եւ նպատակների մասին: Գործող ուժերի պակասը օրըստօրէ մեր համայնքում աւելի է զգացում եւ համոզւած եմ՝ փորձ է կատարում բոլորը իրենց կարողութեան սահմաններում դերակատար լինեն ազգային կեանքում:

Ինչո՞ւ մեր համայնքում բազմակուսակցութիւն չկայ:

Նախորդ պատասխանով, կարծում եմ յստակ է դառնում համայնքում բազմակուսակցութիւն չլինելու հանգամանքը:

ԹՅԹ ՊԺ-ի Վերջին շրջանում, մամուլի ներկայացուցիչները մասնակցում էին նիստերին: Ի՞նչպէս էք գնահատում այդ մասնակցութեան արդիւնքները:

«Ալիք»-ը իր անփոփոխ թղթակցով՝ եւ հետեւողականութեամբ՝ շատ լաւ, «Յոյս»-ը իր խմբագրի մասնակցութեամբ եւ դիպուկ նիւթերով լաւ, իսկ «Արաքս»-ը իր երիտասարդ թղթակիցներով բաւարար չափով կարողացան լրատութիւն կատարել, քննադատել եւ իրենց մտածումները կիսել ընթերցողի հետ: Վստահ եմ՝ յաջորդ շրջանում նրանք մի քայլ առաջ են գնալու եւ մօտեցնելու են՝ Պատգամաւորական ժողով-ժողովրդի կապը:

Ալբերտ Քոչարեան

Ոչ բոլոր հարցերի մասին է, որ կուսակցութիւնը նախապէս որոշում կամ դիրքորոշում ունի



Շուտով Թեհրանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի նոր ընտրութիւններ են լինելու: Ո՞րն է այդ ընտրութիւնների կարեւորութիւնը: ՊԺ-ի որոշումները ի՞նչ ազդեցութիւն ունեն իրնահայ մարդու կեանքում:

Մեր համայնքի կառավարման գործում Պատգամաւորական ժողովը կարեւոր դեր ունի: Այն նախեւառաջ մեր բարձրագոյն օրէնսդիր մարմինն է, բայց օրէնքներ մշակելուց բացի, ունի նաեւ երեք այլ պարտականութիւններ: Այն նաեւ ծրագրող մարմին է եւ որպէս այդ, պիտի մտածի համայնքի ապագայի մասին եւ ծրագրեր մշակի դրա բարգաւաճման համար: Բիւջէյի քըննարկումը այդ կարգի գործերից մէկն է: Նոյնպէս ՊԺ-ն է որոշում թեմական խորհրդի, Հաշվեքննիչ մարմնի եւ այլ մարմինների անդամակազմը: ՊԺ-ը նաեւ վերահսկիչ մարմին է: Այն վերահսկում է թեմական խորհրդի, եւ նրա ենթակայ մարմինների գարծուներութիւնը: Նոյնպէս ՊԺ-ը հանդիսանում է որպէս խորհրդատու մարմին, հարկ եղած պարագաներում, ի մասնաւորի յանձնաժողովների միջոցով առաջարկներ ներկայացնելով գործադիր մարմիններին:

Ի վերջոյ, թեմակալ Առաջնորդը, ՊԺ-ը եւ թեմական խորհուրդը պետութեան մօտ ներկայացնում են մեր համայնքը:

Արդէն երկար տարիներ է, որ դաշնակցական թեկնածուները մեծամասնութիւն են կազմում ՊԺ-ում եւ դա նշանակում է, որ ՊԺ-ում քւէարկուող կարեւոր հարցերի մասին նախապէս որոշում է կայացւել այդ

կուսակցութիւնում: Այս պայմաններում ոչ դաշնակցական եւ անկախ թեկնածուները, ի՞նչ դեր կարող են ունենալ ՊԺ-ում:

Այս հարցին պատասխանելու համար պիտի նկատի առնենք, որ, նախ ոչ բոլոր որոշումներն են, որ քւէարկութեամբ են տեղի ունենում: Գիշտ միտքն ու տրամաբանութիւնը յաճախ իր գործն է անում է եւ ժողովականները այս հիման վրայ ընդունում կամ մերժում են մի տեսակետ:

Երկրորդ, ոչ բոլոր հարցերի մասին է, որ կուսակցութիւնը նախապէս որոշում կամ դիրքորոշում ունի: Դա նաեւ կարող է այն պատճառով լինի, որ հէնց կուսակցութեան մէջ էլ, տարակարծութիւն գոյութիւն ունենայ: Այն հարցերում, որ իշխող կուսակցութեան համակիր պատգամաւորները տարբեր տեսակետներ են պաշտպանում, փոքրամասնութիւնը որոշիչ դեր է ունենում այս կամ այն տեսակետի վաւերացման գործում:

Իհարկէ կան նաեւ նախապէս որոշած խնդիրներ, որոնք մեծ տոկոս չեն կազմում: Այսպիսով, մի անկախ պատգամաւոր կամ փոքրամասնութիւն կազմող խումբ էլ կարող է կարեւոր դեր ունենալ որոշումների կայացման մէջ:

Չմոռանաք նաեւ, որ մի շարք կարեւոր որոշումներ կայացնելու համար, հարկաւոր է աւելի մեծ տոկոս, քան ներկայ պատգամաւորների պարզ մեծամասնութիւնը, այսինքն ներկաների կէսից աւելին: Օրինակ կանոնադրութեան փոփոխութիւնը պահանջում է ՊԺ-ի բոլոր անդամների երկու երրորդը (38 քւէ 56-ից), որը իշխող կուսակցութիւնը ցանկանում է ապահովել այս սահմանը:

Իսկ ընդդիմախօսները ներկաների ձայների մէկ չորրորդն ունենալով (14 քւէ 56-ից), կարող են մի օրակարգ առաջադրել, եւ անձամբ իմ ցանկութիւնն է, որ գալիք ընտրութիւններում փոքրամասնութիւնը կարողանայ ապահովել այս չափը: Հաւատացած եմ, որ նոյնիսկ մէկ ընդդիմախօս (օպոնենտ) պատգամաւորի ներկայութիւնը ՊԺ-ում, կարող է իր չափով դեր ունենալ որոշումների կայացման գործընթացում:

Ի՞նչ պիտի անել այլ խմբակցութիւնների եւ անկախ անձնաւորութիւնների մասնակցութիւնը համայնքի կառավարման գործերում խրախուսելու համար:

Կարեւորն այն է, ստեղծել այնպիսի պայմաններ, որ մարդիկ խրախուսւեն մասնակցելու ազգային մարմիններին, այդ թւում Պատգամաւորական ժողովին: Այդ նպաստաւոր պայմաններից մէկը արդար ընտրութիւններն են: Երկրորդ, ազգային հնարաւորու-

թիւները, օրինակ սրահները, բեմերը եւ այլն, պիտի արդարօրէն տրամադրուի թեկնածուներին: Նոյնիսկ կարելի է իւրաքանչիւր թեկնածուին չնչին բիւջէ յատկացնել՝ իր ընտրական քարոզչութիւնը առաջ տանելու համար:

Ցաւօք որոշ բացասական երևոյթներ արգելք են հանդիսանում, որպէսզի մեր համայնքի ազգային ոգով լցւած մասնագէտներ եւ անկախ մարդիկ խուսափեն մասնակցել ՊԺ-ի ընտրութիւններին, նաև ականատես ենք եղել դէպքերի, որտեղ անկախ անձը հրաժարել է առաջադրել իր թեկնածութիւնը, վախենալով, որ անտեղի պիտակաւորի որպէս «հակառակորդ» կամ իր ունեցած ազգային դիրքը և պաշտօնը խաթարի:

Ինչո՞ւ մեր համայնքում բազմակուսակցութիւն չկայ:

Այն իրականութիւնը, որ մեր համայնքում գոյութիւն չունեն զանազան կուսակցութիւններ, ունի երկու կարգի պատճառներ: Կան ներհամայնքային եւ արտահամայնքային պատճառներ:

Նախեւառաջ, մեր համայնքում չկան զանազան իրական քաղաքական գաղափարախօսութիւններ: Սփիւռքահայ գրեթէ բոլոր խմբակցութիւնների քաղաքական նտածողութեան հիմնական տարրը ազգասիրութիւն, ազգային գաղափարախօսութիւն և Հայկական հարցն է: Հետեւաբար կարիք չի զգացում տարբեր կուսակցութիւններ հիմնելու, որոնք հիմնականում պիտի կազմաւորեն քաղաքական միմեանցից տարբեր գաղափարախօսութիւնների վրայ: Ուստի նման դէպքում ժամանակի ընթացքում ստեղծում է մի քաղաքական ուղղութիւն եւ նրան անդրադարձող մի քաղաքական շրջանակ:

Երկրորդ՝ չկան միթական հնարաւորութիւններ: կուսակցութիւնը կենտրոնատեղի կարիք ունի, կան նաև ընթացիկ եւ այլ տեսակի ծախսեր, որոնց հայթայթելը հեշտ չէ: Այս հարցում պէտք է չմոռանանք, որ մեր համայնքում պատմականօրէն ազգային հնարաւորութիւնները, տարբեր մեխանիզմներով յատկացել են իշխող կուսակցութեան ու նրան ենթակայ միութիւններին և ժամանակի ընթացքում ընդդիմադիր խմբերը զրկել են ազգապատկան բոլոր տեսակի հնարաւորութիւններից:

Սակայն բոլոր խոչընդոտները չեն վերաբերում համայնքի ներքին գործօններին: Կուսակցութիւն հիմնելը հնարաւոր է միայն մեծ քաղաքականութեան շրջանակներում: Մեր պարագային դա սերտօրէն կապ ունի երկրի ներքին քաղաքական դրութեան, Իրան-Հայաստան յարաբերութիւնների և տարածաշրջանի քաղաքական դաշտի պայմանների հետ:

ԹՅԹ ՊԺ-ի Վերջին շրջանում, մամուլի ներկայա-

ցուցիչները մասնակցում էին նիստերին: Ի՞նչպէս էք գնահատում այդ մասնակցութեան արդիւնքները:

Խիստ հաւատացած եմ, որ մամուլը ամէն տեղ պիտի ներկայ լինի: Դա խօսքի ազատութեան առաջին սկզբունքներից է: Բացառութիւններ, իհարկէ կը լինեն, օրինակ, երբ հարկ կը լինի մի որոշակի հարցի շուրջ դժնփակ բանակցութիւններ լինեն:

Մամուլի ներկայացուցիչների ներկայութիւնը պատճառ է դառնում ՊԺ-ի նիստերն աւելի լուրջ դառնան: Նրանց ներկայութեամբ պատգամաւորները աւելի պատասխանատու են արտայայտուում, քանի որ նրանց խօսքերը կարող են արձագանք գտնել թերթերում: Պատգամաւորները աւելի մտածած են խօսում եւ ժողովը աւելի սահուն է ընթանում:

Հիմա ժողովուրդը ՊԺ-ի դիւանի պաշտօնական հաղորդագրութիւններից բացի, նաև մամուլի միջոցով կարող է տեղեակ լինել, թէ ինչ է անցնում պատգամաւորական ժողովում:

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ ԱՉՍ ՄԱԹԵԱՆԻ

ԱՆԽԱՐՀԻ ԳԵՐԲԸ



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՏԸՆՏԻՐ
Պարունակում է գործեր հետեւեալ հաւաքածուներից
Անապատի ծաղիկները (1981)
Չընդհատող եղանակ (1995)
Անտիպ բանաստեղծութիւններ

Ո՞Վ Է ՉԱՐԵՆՅԸ



Նոր հայեացք
Եղիշէ Չարենցի կեանքին եւ ստեղծագործութիւններին.
Բանաստեղծի հոգեբանութեան վերլուծութիւն հիմնւած
նրա գործերի վրայ

ԶՐՈՅՑ ԼԵՒՈՆ ԶԱՖԹՎԱՆԻ ԶԵՏ

ՓԱՐԻԻՉ ՖԻԼՄԸ ՍԱՆ-ՍԵՐԱՍՏԻԱՆԻ ՖԻԼՄԻ ՓԱՌԱՏՕՆՈՒՄ



... Սիրելի ընկերներ, օղանաւում եմ, մի քանի ժամից կը հասնեն թեհրան ...

Ահա իր Ֆէյսբուքի էջում այսպէս է յայտարարում Լեւոն Խանգեալդեան/Յաֆթվանը, ում ոչ ոք էլ չի սպասում թեհրանում: Եւ հիմա, մի երկու շաբաթ անց, նա «Յոյս»-ի գրասենեակում, նստել է դիմացիս բազկաթոռին եւ սպասում է իմ հարցերին: Գիտեմ նա սիրում է պարզապէս անակնկալի բերել մարդկանց, դրանով հանդերձ հարցնում եմ՝ ինչն՞ է այդպէս անակնկալ:

Տորոնտոյից Սան-Սերաստիան մեկնելուց առաջ, կորցրեցի Կանադայում կեցութեան քարտս: Բայց ինձ համար կարեւոր էր ներկայ լինել այդ ֆիլմ-փառատօնում, ուր ցուցադրուում էր Փարիզ իրանական ֆիլմը, որի գլխավոր դերում յայտնուում եմ ես: Ֆիլմը յաջողութեամբ ցուցադրուեց եւ ստացաւ Նոր Ռեժիսորների բաժնի մրցանակը: Հանդիսատեսը լաւ ընդառաջեց: Մամուլում էլ դրական անդրադարձ եղաւ: Բայց երբ արդէն ուզում էի վերադառնալ Տորոնտօ, ուր արդէն քսանից արեւի տարիներ է, որ բնակուում եմ, ինձ ասացին առանց կացութեան քարտի չի լինի: Ես էլ եկայ թեհրան:

Այս մարդու ճակատագիրը կարծես որոշուում է քարտեր կորցնելով: 1991-ին նա գնացել էր Հայաստան մի թատրոնի փառատօնի մասնակցելու ... ու կորցրեց փաստիորթը: Գնաց Մոսկւա այնտեղի դեսպանատնից ժամանակաւոր անցագիր ստանալու: Ինքն այսպէս է

բացատրում շարունակութիւնը.

Ինձ ասել էին երկու-երեք օրւայ ընթացքում հարցը կը լուծւի: Բայց մի ժամանակաւոր անձնագիր պատրաստելը տեւեց մէկ տարի: Այդ ընթացքում ես Ռուսերէն սովորեցի եւ մտայ համալսարան շարունակելու թատրոնի կրթութիւնը: Թեհրանում արդէն ստացել էի լիսանս այդ ճիւղում: Յետոյ գնացի Կիեւ, ուր մի առ ժամանակ Իրանի դեսպանատանը աշխատեցի որպէս թարգմանիչ, յետոյ՝ Եւրոպա եւ ի վերջոյ 4-5 տարի թափառական կեանք ապրելուց յետոյ հաստատուեցի Կանադայի Տորոնտօ քաղաքում:

Տասնհինգ տարի տեւեց Լեւոնի Կանադայում բնակեցման հարցերի կարգաւորումը եւ այդ ընթացքին նա չէր կարող այդ երկրից դուրս գալ: Այդ երկրում նա ապրուստն հայթայթելու համար զբաղւեց զանազան գործերով, բայց չմոռացաւ իր մշտական սերը՝ թատրոնը: Համայնքային մակարդակի բեմադրութիւններին բացի, նա կարողացաւ բեմադրել պիեսներ անգլիախօս դերասանների մասնակցութեամբ: Խնդրում եմ այդ գործերից մէկ-երկուսը մատնանշիր:

Լաւ արձագանք ունեցաւ Հարոլդ Փինթերի *Lover*-ը: Տորոնտոյի թերթերում եղան դրական գրախօսականներ: Դրա դերերում խաղում էին երկրի ճանաչւած դերասաններ: Երկրորդը՝ կը ցանկանամ յիշել Չեխովի «Շնիկով տիկինը» պատմւածքի հիման վրայ գրւած պիեսը: Դա ներկայացուում էր իրական միջավայրում՝ Տորոնտոյի մի հին քաղաքամասի փողոցներում եւ կաֆէներում:

Ասում եմ, ուրեմն պարտադրաբար տորոնտոյում մնալը վատ էլ չի եղել: Իսկ վերջին տարիներում յաճախ է եղել թեհրանում: Ասում է. «Հա. վեց անգամ շուրջ երկու տարւայ ընթացքում»: Իսկ ի՞նչ գործով: Իրանական թատերական փառատօնների համար աշխատում եմ միջազգային յարմար գործեր գտնելու եւ առաջարկելու ասպարէզում:

Բայց նաեւ դերակատարել ես մի քանի իրանական ֆիլմերում: Չէ՞:

Այո: Դրանք մի քիչ էլ պատահական ստացւեց: Երկու իրանական ֆիլմերում, երեւան եմ եկել գլխավոր դերերում: Դրանցից մէկը, Մաջիդ Բարզեգարի Փարիզը, արդէն պատրաստ է եւ ցուցադրել է մի քանի միջազգային փառատօններում: Հէնց այդ առիթով էլ գնացել էի Սան Սերաստիան: Միւսը, որը դեռ վերջնական



անուն չունի, բեմադրել է Մոհամադ Շիրևանին: Դա էլ շատ շուտով պատրաստելու է: Բարգեգարը եւ Շիրևանին երկուսն էլ արդի կինո-ռեժիսորներ են. նրանց հետ համագործակցեցի լաւ փոխհասկացողութեան հիման վրայ:

Չարցնում եմ՝ լաւ, հիմա թատրոնն է աւելի լաւ, թե՞ սինեման: Նախ կտրուկ պատասխանում է. «Թատրոնը»: Բայց յետոյ նաեւ բացատրում է. «Թատրոնի կենդանի եւ անկրկնելի բնոյթը, այն, որ հէնց այդտեղ հանդիսատեսի ներկայութեամբ «նի բան է պատահում», սինեմայում բացակայում: Ի հարկէ այս երկու փորձը ինձ ապացուցեց, որ դա սինեմայում էլ աւելի սահմանափակ ձեւով պատահում է: Բայց սինեման վերածում է ֆիլմի եւ մնում է: Ես կարող եմ փարւիզ ֆիլմի դի վի դին տամ օրինակի համար աղջկաս եւ ասեմ, սա իմ աշխատանքի արդիւնքն է: Այն կարող է տալ քեզ եւ դու կարող ես գործը իրապէս տեսնել: Դա թատրոնում հնարաւոր չէ:



Յաջողութիւն եմ մաղթում նրան եւ յոյս եմ յայտնում, որ շուտով կ'ստանայ կացութեան քարտը: Շնորհակալութիւն է յայտնում եւ ասում է, որ յամենայն դէպս Փետրւարին Ֆաջրի թատրոնի համար Թեհրանում է լինելու: «Չա», ասում եմ, եւ մտածում եմ, իհարկէ եթէ փաստիորթը կորցրած չլինի:



ՀԱՅ ԳՐԵՒ ՑՈՒՑԱՅԱՆՆԵՐԸ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

Մշակույթի շաբաթւայ առիթով, Հոկտեմբերի 11-18-ին Թեհրանի Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում տեղի ունեցաւ հայ գրքի ցուցահանդէս: Ցուցահանդէսին տաղաւարներ ունէին Նայիրի հրատարակչութիւնը, ՀՀԹ հրատարակչութիւնը, Հոսկը եւ Հայ Գրողների Միութիւնը: Ցուցադրւած էին ոչ միայն վերջին մէկ տարւայ, այլ նաեւ հրատարակիչների բոլոր գրքերը: Գրողների միութեան տաղաւարում կարելի էր դիտել եւ գնել նաեւ այլ հրատարակիչների կողմից հրատարակւած հայ հեղինակների գրքերը, օրինակ Վահէ Արմէնի «Երբ անձրեւի, կը գնանք», Ազատ Մաթեանի «Աշխարհի գերբը», Լեւոն Ահարոնեանի «Փոթորկոտ կեանքիս օրերը» եւ այլ գրքեր:

Ս. Սարգիս եկեղեցու բակում աշխոյժ եւ ուրախ մթնոլորտ էր ստեղծուում, երբ հայոց դպրոցների աշակերտներին բերում էին ցուցահանդէս: Այս երկու էջերի լուսանկարները հենց վկայում են այդ մասին:





Ձկան թոնի սալաթ


ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆ

Ձկան թոն	1 տուփ պահածոյ
Գետնախնձոր	4 հատ
Սոխուկ	6 հատ
Սամիթ	կէս թէյի բաժակ
Մայրոնեզ	ըստ ճաշակի
Աղ, պղպեղ	ըստ ճաշակի
Թթու վարունգ	4 հատ
Կիտրոն	1 հատ

Պատրաստման ձև

Գետնախնձորները եփել ու մանր կտրատել: Սոխուկը, սամիթը, թթու վարունգը մանրացնել եւ աւելացնել խառնուրդին եւ խառնել: Վերջում աւելացնել ձկան թոնը եւ դնել սառնարան: Ըստ ճաշակի կարելի է սամիթի փոխարէն ազատքեղ օգտագործել:

ԲԱՐԻ ԱԵՈՐԺԱԿ





ՏՆՏԵՍՈՒՅՈՒ ԱՆԿԻՆ

ԱՂԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Քաթրին Եաղուբեան



Աղը ոչ միայն կարելի է օգտագործել խոհարարութեան, այլ նաեւ տան մաքրութեան ու ապրանքների պահպանութեան համար:

1-Տիպիկ հոտը տնից հեռացնելու համար, մէկ գդալ աղ, լինոն կամ քացախ եւ սոդայի փոշին խառնել ու մաքրել: Անմիջապէս կը վերանայ հոտը:

2-Նստածք թողած թէյնիկը կամ սրճեփղ մաքրելու համար մի քիչ աղ տրորել ու յետոյ լւանալ:

3- Աղը շաղ տալ ծաղկամանում կամ որեւէ իրի մէջ, որի ներքին մասը դժար է մաքրել եւ կէս ժամից լւանալ:

4-Եթէ աւազը հետք է թողել ակաբիւնում, առանց եօղի աղով կարելի է հեշտութեամբ լւանալ այն :

5- Չէթը տապակի կամ դազանի միջից աւելի լաւ մաքրելու համար, աղ ցանել, ապա իւղաթղթով մաքրել եւ յետոյ լւանալ:

6-Չի հոտը տապակի միջից վերացնելու համար, աղ լցնել ու յետոյ լւանալ:

7- Փուռը մաքրելու համար առաջարկուում է աղով մաքրել:

8- Որպէսզի բուխարիկը դեղնագոյն վառւի, շաբաթը երկու անգամ, մի կամ երկու բուռ աղ ցանել կրակի վրայ:

9- Գորգի վրայ նստածք թողած իւղը հեռացնելու համար, բաւական է 1 ճաշի գդալ աղ հարել մի քիչ քացախի հետ ու մեղմ տրորել գորգի վրայ:

10-Չեռքի մաշկի վրայից սոխի կամ սխտորի հոտը վերացնելու համար, ձեռքերը դնել մի քիչ աղի ու քացախի մէջ ու լւանալ:

11-Արեան նստածքը զգեստների վրայից մաքրելու համար, թրջել աղաջրի մէջ, ապա լւանալ տաք ջրով ու քիմիական փոշիներով:

12-Վարագոյրները աւելի ճերմակեցնելու համար, դրանք թրջել աղաջրի մէջ, յետոյ լւանալ:

13-խոզանակը աւելի լաւ մնալու համար, կարելի է օգտուելուց յետոյ, այն թրջել աղաջրի մէջ:

14- Աւելի օգտագործման ժամանակը երկարացնելու եւ աւելի նոր մնալու համար, նախքան օգտագործելը թրջել տաք աղաջրի մէջ:

15-Սառնարանի հոտը վերացնելու համար աղի եւ սոդայի փոշին հարել ու դնել սառնարանում:

16-Ատամները սպիտակ լինելու համար, նախքան ատամի խնորով խոզանակելը, աղի ու սոդայի փոշիով խոզանակել ատամները:

17-Սաւանները ճերմակեցնելու համար, այն պէտք է լւանալ մէկ անգամ աղի ու սոդայի փոշիով, տաք ջրի մէջ:

ՀՊԱՐՏԱՆՈՒՄ ԵՄ ԱՅՍ ՆԻԱՃՈՒՄՆԵՐՈՎ

Արման Տ. Ստեփանեան

Աշխարհի առաջին ռակետ Ռոջեր Ֆեդերերը, ում համար ընթացիկ շաբաթը 300-րդն է ATP դասակարգման աղիւսակի ամենաբարձր կէտում, նշում է, որ այս ձեռքբերումն ամենակարեւորներից է նրա կարիերայում: Սա, երեւի, ամենալուրջ նւաճումներից մէկն է ինձ համար: Ես հպարտանում եմ այս ռեկորդով: Աննկարագրելի զգացումներ ունեմ, որովհետեւ գիտեմ, որքան ուժ եմ ներդրել այս յաջողութեան համար, - Ֆեդերերի խօսքերը մէջբերում է ԸԶՀ-ի պաշտօնական կայքը: Ուիմբլդոն-2012-ում տօնած յաղթանակից յետոյ Ռոջերը վերադարձաւ ԸԶՀ-ի դասակարգման առաջին հորիզոնական, ինչը հնարաւորութիւն տւեց վերջինիս բարելաւել Պիտ Սամպրասի ռեկորդը, ով դասակարգման աղիւսակի առաջին հորիզոնականում անց է կացրել 286 շաբաթ:

Նրա կայունութիւնը իրօք տպաւորիչ է: Յուսամ, երբ լինեն 31 տարեկան, կը կարողանամ մրցակցել կայուն մակարդակի վրայ: Դա իրօք շատ ծանր է: 10 տարի շարունակ գտնել հոյակապ մարզավիճակում, ինչպէս դա անում է Ռոջերը, - ասում է Էնդի Մարեյը: Ռոջեր Ֆեդերերը ծնւել է 1981 Օգոստոսի 8-ին Շւէյցարիայի Բազել քաղաքում: Նրա հայրը շվեյցարացի,

իսկ մայրը Հարաւային Աֆրիկայից է: Նա այսօր ունի թէ՛ շվեյցարական եւ թէ՛ հարաւ աֆրիկեան անձնագիր: Ըստ շատ մեծ մասնագէտների, նա համարում է աշխարհի բոլոր ժամանկաների ամենալաւ թենիսիստը: Նրան յաջողւել է հինգ անգամ անընդմէջ դառնալ Ուիմբլդոն թենիսի մրցութեան յաղթողը: Ինչպէս նաեւ նա կարողացել է 17 անգամ ձեռք բերել գրանդ սլամ, որը բոլոր տղամարդ թենիսիստներից շատ է: Նա հէնց շատ փոքր հասակից իր սէրը արտայայտեց թենիսի հանդէպ: Հէնց այդ իսկ պատճառով, նրա հայրը նրան ուղարկեց թենիսի դասարան, երբ նա ընդամենը ութ տարեկան էր: Նրա քոյրը պատմում է, թէ հէնց այդ ժամանակներից նա շատ արագ սկսեց առաջանալ թենիսում: Երբ ընդամենը տաս տրեկան էր, կարողացաւ յաղթել իր բոլոր հակառակորդներին: Իսկ մրցութիւններից յետոյ միշտ սեղմելով իր հակառակորդի ձեռքը, նրան ասում էր, -Վստահ եմ միւս անգամ դուք կը յաղթէք: Պատանի տարիքում նա շատ յաճախ ունէր վնասուածքներ, սակայն վերջապէս 1998-ից նրան յաջողւեց մուտք գործել արդէն պրոֆեսիոնալ թենիսի աշխարհ: Դրանից յետոյ սկսեց նրա փայլուն կարիերան, որը մինչ այսօր էլ շարունակւում է:





ԱՐՈՆՆԵԱՆԸ «ՈՉ ՈՔԻ» ԽԱՂԱՅ ԿԱՐԼՍԵՆԻ ԴԻՄԱՅ

Աւարտուեց Բիլբաոյում ընթացող «Մեծ սաղաւարտի» եզրափակիչ փուլը: Վերջին՝ 10-րդ տարում, իրար հետ էին մրցում ՖԻԴԵ-ի վարկանիշային աղիւսակի առաջին համարը: Մագնուս Կարլսէնը եւ երկրորդ համարը՝ Լեւոն Արոնեանը: Մեր շախմատային առաջատարը մրցում էր սպիտակներով: Խաղից առաջ Արոնեանը ունէր 10 միաւոր եւ նոյնիսկ յաղթանակի դէպքում չէր կարող յաւակնել առաջին հորիզոնականին: Պարտիան աւարտուեց ոչ ոքի: Այսինքն Արոնեանը ունի 11 միաւոր եւ մնաց, իսկ Կարլսէնը 17 միաւոր: Առաջին հորիզոնականի համար պայքարում են դանիացի Մագնուս Կարլսէնը եւ իտալացի Ֆաբիանո Կարուանան. տուրից առաջ երկու շախմատիստներն էլ ունէին 16-ական միաւոր: Իտալացի գրոսմայստերը սեւ ֆիգուրներով մրցում էր իսպանացի Ֆրանսիսկո Վալեխոյի հետ: Այդ պարտիան խաղաղ էլք ունեցաւ: Տուրի 3-րդ խաղում մրցում էին Անանդը եւ Կարիակիինը: Այդ պարտիան աւարտուեց ոչ ոքի: Մրցաշարային աղիւսակի վերջնական տեսքը.

1. Ֆաբիանո Կարուանա՝ 17
2. Մագնուս Կարլսէն՝ 17
3. Լեւոն Արոնեան՝ 11
4. Սերգեյ Կարիակիին՝ 10
5. Վիշւանաթան Անանդ՝ 9
6. Ֆրանսիսկո Վալեխո՝ 6

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ ՅԵՏԱՔՐՔՐԻՈՒՄ ԵՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՈՎ



Ինչպէս յայտնում է Tuttomecatoweb-ը, անմիջապէս երկու գերմանական թոփ ակումբ՝ Դորտմունդի «Բորուսիա»-ն ու «Շալկե-04»-ը հետաքրքրած են Դոմեցկի, Շախտիորի ու Չայաստանի հաւաքականի ֆուտբոլիստ Յենրիկ Մխիթարեանի ծառայութիւններով: Ինչպէս յայտնի է, Մխիթարեանը հոյակապ մրցաշրջան է անցկացնում ու արդէն հասցրել է 14 գնդակ հեղինակել Ուկրայինայի առաջնութիւնում ու գլխաւորել լաւագոյն ռմբարկուների ցուցակը: Յենրիկը նաեւ Չայաստանի հաւաքականի առաջատարն է, եւ բնական է, որ առաջատար եւրոպական ակումբներ հետաքրքրուած են նրա ծառայութիւններով: Յիշեցնենք, վերջերս Յենրիկը նշել է, որ ներկայումս նրա մտքերը կապուած են միայն հանքափորների հետ:

«Յոյս» երկշաբաթաբեր ընկերության փառատուում է

«Արարատ» Մարզադահլիճ-ուճ

Միճան Օճկ - Ճիաբան Արարատ

Տեղփն: 88030224

«Նաշրէ Չեշնէ» գրախանուճ-ուճ

Զիր թլ Գրիմ Ճան, Նիշ Միրզայ Տիրազի,

«Նշր Ճիշմե»

Տեղփն: 88907766

«Հայ Ակուճը»-ուճ

Ճիաբան Աճղաբ, Ճիաբան Տոբլ Լոշատու,

Ճիաբան ՃարԿ, Տարե 1

«Աճճն Արաճե Տեղրան»

«Շաճթ Մուճըճ»-ուճ

Տիր Մրճ ճնուճի ՏեղիճԿար Աթի

թլաԿ 116

Տեղփն 77826617



ARA BURGER
FAST FOOD RESTAURANT

Արա Բըրգըր

ԱՐԱ ԲԵՐԳԵՐ

Տնօրէն՝ Գաղաթրեան

Tel: 77 82 13 30

77 82 13 29


Աճրս: Մճիճիճե, Ճիաբան Գլըրգր Գրիբի (ճանաբան), Տաթաբ Ճիաբան Գրեճան,
Աճնճայ Ճիաբան Տեղիճ Արասի, թլաԿ 4

TADEH
BARBER

Գր Աճիճե
Օրեճաթիճե
Մաթ Գրճն Մր
Գրիմ Գաճաճ

Ճիաբան թար Տիրազ Գոճե Տոբար թրաթիճ Տոբար
Տարաճ: 09124630038

Art system



Arthur, Alen, Alex

Գճաճատ Մաճիճնեի Աճարի

Տրօրիճ և Տեղմիր Ճարթրեի Արիզի Մօղրաթնան HP և Տրօրիճ EPSON

Տեղփն: 88321436-7 և 88315343-4

ԳԿՏ: 88833000

Աճրս: Տեղրան, Ճիաբան Արաճեղր ճնուճի, Արիճն Տրազ Ճիաբան Տեղիճե.

Տարե 7, թլիԿե Տօճ, Աճճ 5

شهرستان

دو هفته نامه
اجتماعی فرهنگی

شماره ۱۳۳ / ۳ آبان ۱۳۹۱ / قیمت ۱۸۰۰ تومان

سال ششم

تفلیس
شهر نیمه ارمنی سابق

دو هفته نامه اجتماعی فرهنگی هووس

شماره ۱۳۳، ۳ آبان ۱۳۹۱
سال ششم



نمایشگاه کتاب ارمنی در کلیسای سرکیس مقدس

صاحب امتیاز و مدیر مسؤول:
لئون آهاروتیان

دبیر تحریریه: روبرت صافاریان

شورای نویسندگان:

لیا خاچکیان
گارون سرکیسیان
آرمینه ملیک ایسرائلیان

مدیر هنری: لیا خاچکیان

ویراستار بخش فارسی: نسیم نجفی

وب سایت: کاجیک صافاریان

ورزش: آرمان در استانیان

اشتراک: کاترین یعقوبی

نشانی: تهران، میدان آرژانتین،
خیابان زاگرس، خیابان سی و پنجم،
پلاک ۱۳، واحد ۵

تلفن: ۸۸۷۷۰۶۵۸
۸۸۷۷۵۶۵۶

نشانی وب سایت:

www.hoos.com

وب سایت فارسی:

<http://farsi.hoos.com>

پست الکترونیکی:

hoos@inbox.com

در این شماره

فهرست ۱۳۳	
۲	در صفحات ارمنی این شماره هووس
۴	تفلیس، شهر نیمه ارمنی سابق روبرت صافاریان
۵	رویکرد ارمنستان به چالش میان ایران و غرب دکتر افشار سلیمانی
۸	تیگراناکرت: حماسه‌ای خفته در خاک گارون سرکیسیان
۱۰	گبی با طراح لباس جوان شافیک ادواظراریان آنی قلیچیان
۱۲	داستان: عروسی کاترین یعقوبیان

بخش ارمنی

۲	جامعه ارمنه: انتخابات مجمع ارمنه تهران و شمال کشور
۴	خواست جوانان جلفای اصفهان و شاهین شهر از خلیفه‌گری نیکید میرزایانس
۶	ارمنستان: شروع ساخت شاهراه جنوب-شمال ارمنستان آنوش مگردچیان

مهاجرت فراموش شده

۸	جنگ‌های ایران و روس و ارمنه ر. ص.
۸	بخشی از کتاب «ارمنه ایران» نازار گورویانتس
۱۰	درباره کتاب «ارمنه ایران» و نویسنده آن

۱۲	پاسخ نمایندگان مجمع ارمنه تهران و شمال کشور به پرسش‌های هووس
۱۲	روبیگ سرداریان: مسأله اصلی تساهل و همکاری است
۱۴	امیل مناساکانیان: جدایی اعتقادی به سبک سابق وجود ندارد
۱۵	ژوزف مهربان: گروه اعتقادی یا انجمن فرهنگی - ورزشی
۱۶	آلبرت کوچاریان: همه مسائل با رای گیری حل نمی شود
۱۷	شعرهای ویتنامی
۱۸	گفت‌وگو با لئون هفتون روبرت صافاریان
۲۰	نمایشگاه کتاب ارمنی در کلیسای سرکیس مقدس
۲۲	آشیزی
۲۳	خانه‌داری
	کاترین یعقوبیان
۲۴	ورزش



گذشته می‌شود دارای موضع‌گیری و نظر از پیش معینی نیست و حتی گاهی بین نمایندگان وابسته به آن بحث‌های تندی در می‌گیرد. امیل مناسکانیان می‌گوید که صف‌بندی‌های اعتقادی پیشین در میان جامعه ارمنه اکنون دیگر وجود ندارند. هنگام بحث درباره مسائل مختلف البته نمایندگان هم‌نظر با هم گروه‌هایی تشکیل می‌دهند و همین برای حل و فصل امور جامعه ارمنه کفایت می‌کند. این که این گروه‌ها تبدیل به حزب شوند باید شرایطش مهیا باشد و در یک فرایند طبیعی رخ دهد. حزب‌هایی که به طور مصنوعی شکل بگیرند معمولاً زیاد دوام نمی‌آورند.

روبیک سرداریان نیز بر این باور است که اکنون مسأله اصلی میان نمایندگان مجمع این است که یک دیگر را تحمل کنند و با هم همکاری کنند. همین طور این که در صورت لزوم با صف واحدی به میدان بیایند، فعال و دموکرات باشند. به نظر سرداریان اگر تاریخ دوازده سال گذشته مجمع نمایندگان را بررسی کنیم، خواهیم دید برخی اصطلاحات مانند شفافیت و تساهل و غیره که زمانی طرح‌شان باعث تشنج در نشست‌های مجمع می‌شد، امروز از سوی همه نمایندگان به کار می‌روند. ژوزف مهربان موضوع دیگری را طرح می‌کند. وقتی از گروه‌بندی‌ها در جامعه ارمنه یا مجمع نمایندگان آن صحبت می‌کنیم منظورمان دقیقاً چیست؟ آیا انجمن فرهنگی ارمنه و سپیان و رافی گروه‌های اعتقادی هستند یا انجمن‌های فرهنگی-ورزشی؟ او معتقد است که کمبود نیروهای فعال در جامعه ارمنه احساس می‌شود و باید همه با بیشترین نیروی خود در اداره امور آن مشارکت کنند.

گپی با لئون هفتوان، بازیگر فیلم پرویز

موفقیت‌های فیلم پرویز ساخته مجید برزرگر در جشنواره‌های بین‌المللی این روزها نقل محافل هنری و سینمایی است. پرویز در جشنواره سن سباستین جایزه بهترین فیلم را در بخش کارگردان‌های نو به خود اختصاص داد. نقش اصلی این فیلم را لئون هفتوان بازی می‌کند که مقیم کاناداست و اکنون چند هفته‌ای به تهران آمده است. از این فرصت استفاده کردیم و گفت‌وگویی

کوتاهی با او کردیم که در این شماره مجله به چاپ رسیده است.

لئون در ایران و سپس و در مسکو درس تئاتر و هنرهای نمایشی خوانده و سپس در مدت اقامت هفده ساله خود در شهر تورونتو کانادا نمایش‌نامه‌هایی به زبان انگلیسی و با حضور بازیگران کانادایی به صحنه برده است. او به عنوان مشاور و فراهم‌آورنده کارهای نمایشی بین‌المللی و آوردن گروه‌های تئاتر خارجی به ایران، برای جشنواره‌های تئاتر کشور کار می‌کند و در یکی دو سال اخیر مرتب به تهران مسافرت کرده است. در همین سفرها هم پیشنهاد بازی در دو فیلم سینمایی به او می‌شود. یکی فیلمی از محمد شیروانی که آخرین مراحل آماده شدن برای نمایش را می‌گذراند و دیگری فیلم پرویز ساخته مجید برزرگر که در چندین جشنواره به نمایش در آمده و به احتمال بسیار در جشنواره فیلم فجر امسال هم نمایش داده خواهد شد.

امسال نامزدهای ریاست جمهوری آمریکا وعده‌ای به ارمنه نداده‌اند

نه باراک اوباما و نه میت رامنی، نامزدهای ریاست جمهوری دو حزب دموکرات و جمهوری‌خواه هیچ یک در تبلیغات خود سخنی از حمایت از کارزار ارمنه برای به رسمیت شناخته شده نژادکشی ارمنه در کنگره آمریکا نگفته‌اند. در

دوره‌های پیشین، هم باراک اوباما و هم جورج بوش در طول تبلیغات انتخاباتی وعده می‌دادند که در صورت انتخاب شدن قتل عام ارمنه را به عنوان نژادکشی به رسمیت خواهند شناخت، اما بعد از انتخاب نمی‌توانستند یا نمی‌خواستند به وعده خود عمل کنند. آن‌ها در عوض این وعده‌ها رای ارمنه ایالات متحده را به دست می‌آوردند. اوباما بارها و بارها از سوی ارمنه به ریاکاری متهم شد. او هر سال روز بیست‌وچهارم آوریل، در سالگرد کشتار ارمنه در سال ۱۹۱۵ در امپراتوری عثمانی، برای ارمنه پیام همدردی فرستاد، اما از به کار بردن کلمه Genocide، یعنی همان اصطلاحی که لابی خواهان آن بود خودداری می‌کرد و کلمه یقین Yeghern را به کار می‌برد که به ارمنی به معنای مصیبت و سوگ بزرگ است. اما چه شده است که امسال هیچیک از دو نامزد کوششی برای به دست آوردن رای ارمنه نمی‌کند؟ آیا کمیت این رای اهمیتش را از دست داده است؟ آیا توافق‌های پنهانی با ترکیه انجام شده است؟ یا شاید آن‌ها به این نتیجه رسیده‌اند که وعده دادن و عمل نکردن به آن عوارض منفی‌اش بر فوایدش می‌چربد. به هر رو دفتر «های داد» (دادخواهی ارمنه) ایالات متحده نیز اعلام کرده است که ارمنه این کشور از هیچیک از نامزدهای ریاست جمهوری حمایت نمی‌کنند.

نخواهد یافت. کلیسای ارامنه، تئاتر پطروس دوریان و تعدادی بناهای دیگر در بخش قدیمی شهر (محلله هاوولابار) هنوز دایرند و اگر ارمنی صحبت کنید در شهر کسانی به شما نزدیک خواهند شد و با شما ارمنی حرف می‌زنند. اما حضوری متناسب با آن پیشینه تاریخی نمی‌بینید. آیا این امر نتیجه مهاجرت طبیعی و کمرنگ شدن تدریجی نقش ارامنه در فضای فرهنگی و اجتماعی شهر است یا محصول سیاست‌های برنامه‌ریزی شده ارمنی‌زدایی، چنان که بعضی‌ها اعتقاد دارند؟ در این باره با قاطعیت چیزی نمی‌توانم بگویم.

اما به هر رو تفلیش شهر زیبایی است و دارد به سرعت بازسازی می‌شود. کوشش می‌شود در عین نوسازی حال‌وهوای قدیمی شهر حفظ شود، هرچند از دید خانمی که خانه‌اش را به ما اجاره داده بود، فضای عمومی تفلیس آن قدر رنگ‌وارنگ نبوده است که اکنون دارند می‌سازند.



تفلیس

شهر نیمه ارمنی سابق

روبرت صافاریان

شهر یک منطقه قدیمی دارد که می‌توان با تله کابین از بالای آن عبور کرد و منظره بدیع بام‌های اخرايي رنگ خانه‌ها، رودخانه و پل بزرگ آن و میدان اصلی و رستوران‌های دوروبرش را از بالا دید.

دوست گرجی‌ام از تبار گرجیانی است که تقریباً همزمان با ارامنه، عمدتاً در زمان شاه عباس، به ایران کوچانده شده و اکنون بیشتر در شاهین شهر زندگی می‌کنند. آن‌ها به اسلام گرویده‌اند اما هنوز زبان و آداب و رسوم خود را حفظ کرده‌اند و بعد از فروپاشی شوروی به گرجستان رفت‌وآمد می‌کنند و گروهی نیز به آنجا مهاجرت کرده‌اند. نمی‌دانم تفلیس برای آن‌ها چه معنایی خواهد داشت؟ تنها شهری زیبا، چنان که برای بیشتر جهانگردان، یا ارتباطی معنوی‌تر، به عنوان نماد گذشته‌ای که شاید در اعماق وجودشان، به حیات خود ادامه می‌دهد؟

به دوست گرجی جدیدم که تفلیس را ندیده است می‌گویم تفلیس در تاریخ ارامنه و بخصوص تاریخ فرهنگی ارامنه نقش بزرگی داشته است، بزرگ‌تر از ایروان و او در این باره چیزی ننشیده است. به او توضیح می‌دهم که سایات نوا شاعر ارمنی بزرگ سده هیجدهم در دربار گرجستان می‌زیسته و به گرجی هم شعر سروده است، خانه پدری پاراجانف در تفلیس بوده و او بخش مهمی از زندگی‌اش را در این شهر زیسته است، تفلیس مهد تئاتر ارمنی بوده است و بیشتر نویسندگان مهم ارمنی در تفلیس درس خوانده‌اند، حتی بیانیه استقلال نخستین جمهوری ارمنستان (۱۹۱۸-۱۹۲۰) در این شهر نوشته و منتشر شده است. می‌گویند زمانی نیمی از جمعیت تفلیس را ارامنه تشکیل می‌دادند.

اما دوست من چیزی در این باره ننشیده است و اگر امروز زمانی به پایتخت گرجستان سفر کند نشانه‌های زیادی از حضور ارامنه در این شهر



رویکرد ارمنستان به چالش میان ایران و غرب

هدف از نقل این نوشته و مقالات مشابه به قلم کارشناسان ایرانی که به نقل از منابع فارسی در صفحات هویس درج شده و خواهد شد، آشنایی خوانندگان ما با دیدگاه‌های کارشناسان ایرانی درباره مسائل ارمنستان، اوضاع منطقه قفقاز و در نهایت تأثیر آن‌ها بر مناسبات ایران و ارمنستان است. با ارزیابی این نوشته از اوضاع منطقه و برخی داورهای آن می‌توان مخالفت کرد یا در صحت برخی اطلاعات ارائه شده در آن‌ها تردید کرد، اما حسن این گونه نوشته‌ها این است که برخلاف اظهارنظرهای سیاستمداران مقامات دیپلماتیک، تعارف ندارند، صریح سخن می‌گویند و می‌کوشند با استناد به اظهارنظرهای مقامات سیاسی و کارشناسی مندرج در رسانه‌ها سخن بگویند. به هر رو، آشنایی با آن‌ها، که طبیعتاً به معنای قبول دیدگاه‌های آن‌ها نیست، برای خواننده علاقه‌مند به پی‌گیری مسائل ارمنستان و روابط ایران و ارمنستان ضروری است.

دکتر افشار سلیمانی

باشد که در آینده امکان انتقال گاز ایران به مقاصد ثالث از طریق ارمنستان مهیا باشد! چه بسیار نیکوست که اقداماتی در منطقه صورت گرفت و در حال انجام است که روسیه را از حیث انتقال انرژی و مسیر انتقال آن دور زده و می‌زنند. مثال بارز آن احداث و عملیاتی شدن خط لوله نفت باکو - تفلیس - جیحان و خط لوله انتقال گاز باکو - تفلیس - ارزروم و امضای سند احداث خط لوله گاز ترانس آناتولی موسوم به تاناپ که اخیراً میان رجب طیب اردوغان و الهام علی‌اف در استانبول در حاشیه نشست سازمان همکاری‌های اقتصادی دریای سیاه به امضاء رسید. گفته می‌شود این پروژه ۲۰۰۰ کیلومتری دوسال دیگر شروع و پس از ۵ سال از زمان شروع به بهره‌برداری خواهد رسید.

به هر حال ارمنستان ۲۰ سال است صرفاً با ایران و گرجستان دارای مرزهای باز است که در این میان مرز با ایران به دلیل غیر قابل مقایسه بودن توان اقتصادی، سیاسی و... ایران با گرجستان، برای ارمنستان بسیار حیاتی و مهم است و از همین رهگذر تحولات داخلی و خارجی ایران برای این کشور حائز اهمیت است؛ چرا که کشوری که ایران را راه تنفس خود می‌داند و لئون ترپتروسیان رئیس‌جمهور وقت ارمنستان چند سال پیش که هنوز گازی از ایران به این کشور منتقل نمی‌شد و حجم مناسبات دو کشور در حد امروزی

ارمنستان دو دهه است که قره‌باغ و چند شهر آذربایجان را به کمک روسیه اشغال کرده و خود را در محاصره ژئوپولیتیک قرار داده است. ترکیه به دلیل ادعاهای تاریخی ارمنستان در مورد قتل عام ارامنه در آوریل ۱۹۱۵ به دست ترکان عثمانی و ادعای ارضی این کشور نوپا نسبت به بخشی از اراضی ترکیه و همچنین اشغال ۲۰ درصد از اراضی آذربایجان، مناسبات دیپلماتیک و مرزهای خود را با ارمنستان مسدود نموده است. روسیه هم به رغم این که سرنوشت نظامی، امنیتی، سیاسی و تا حد زیادی نیز اقتصادی ارمنستان را در پد اختیار خود دارد اما به دلیل عدم وجود مرز خاکی و آبی میان دو کشور و مجبور بودن به استفاده از مسیر گرجستان که دارای مرز با ارمنستان است، با مشکلاتی در همکاری‌های تجاری، انرژی و حمل و نقلی مواجه است.

اساساً روسیه به دلیل وابستگی به مسیر گرجستان به منظور انتقال گاز به این کشور و داشتن چالش و تنش و در برخی مواقع جنگ گرم با گرجستان، به ارمنستان و ایران در رابطه با احداث خط لوله انتقال گاز از ایران به ارمنستان چراغ سبز نشان داد تا متفق خود ارمنستان را از این مشکل رهایی بخشد و میدان مانور گرجستان را در این زمینه محدود کند.

هرچند روسیه به ارمنستان اجازه نداد قطر خط لوله در خاک ارمنستان به حدی



